

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Նվիրվում է Արցախի պետական համալսարանի
հիմնադրման 50-ամյակին*

ԱՐՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

(ուսումնամեթոդական ուղեցույց)

Երևան-2019

Տպագրվում է ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ

Հեղինակներ

Նանա Առուստամյան – ԱրՊՀ գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժնի պետ

Հասմիկ Մինասյան – ԱրՊՀ որակի ապահովման կենտրոնի վարիչ

Խմբագրական խորհուրդ

Մարգարյան Ա. Յու. (նախագահ)

Առուստամյան Ն. Է. (պատասխանատու քարտուղար), Ավանեսյան Վ. Մ.,
Ղազարյան Հ. Ս., Մարգարյան Լ. Գ., Մարգարյան Լ. Ս., Մինասյան Հ. Ջ.,
Մինասյան Մ. Մ., Յարամիշյան Վ. Բ., Սահակյան Գ. Հ.

Ուսումնամեթոդական ուղեցույցում ներկայացված են Արցախի պետական համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը, որակի ապահովման հիմնական գործընթացները և մեխանիզմները:

Ուղեցույցում նշված որակի ապահովման գործընթացների գնահատման համար մշակվել են համապատասխան գործիքներ:

Ուղեցույցը նախատեսված է համալսարանի վարչական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի, ուսանողների, ասպիրանտների, արտաքին շահակիցների, ինչպես նաև որակի ապահովման համակարգի հետազոտողների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ՄԱՍ 1. ԱՐՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	6
1.1 Որակի ապահովման քաղաքականության նպատակները և խնդիրները.....	7
1.2 Որակի ապահովման հիմնական սկզբունքները.....	8
1.3 Որակի ապահովման ռազմավարությունը.....	9
1.4 ԱրՊՀ որակի ապահովման համակարգը.....	10
ՄԱՍ 2. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ	
ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	12
2.1. Որակի ապահովման հիմնական գործընթացները	12
2.2. Որակի կառավարման գործընթացների պարբերականությունը.....	19
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ.....	22
ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ.....	37
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	39


ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից աշխարհում հասարակական և տնտեսական կյանքում ընթացող արագ փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունենում կրթական համակարգի վրա: Տարբեր բնագավառներում փոփոխությունները այնպիսի արագությամբ են ընթանում, որ կրթության համակարգը երբեմն չի հասցնում արձագանքել դրանց: Նախկինում գիտելիքի հիմնական աղբյուր հանդիսացող կրթության համակարգը համացանցի զարգացման հետևանքով կորցրել է իր մենատիրությունը. դպրոցների, քոլեջների և համալսարանների կողքին հայտնվել են ֆորմալ և ոչ ֆորմալ կենտրոններ, որոնք հաճախ ավելի ճկուն են և ավելի արագ են արձագանքում արագ ձևափոխվող աշխատաշուկայի պահանջներին: Գիտատեխնիկական նոր հեղափոխությունը, արհեստական ինտելեկտի ստեղծումը, զգալի տեղաշարժերը արտադրության բնագավառում փոփոխություններ են առաջացնում գլոբալ աշխատաշուկայում, դրա կառուցվածքում և աշխատողների մասնագիտական որակների նկատմամբ պահանջներում:

Այս պայմաններում խիստ կարևորվում է մասնագիտական կրթության և ուսանողներին մատուցվող այլ ծառայությունների որակի հարցը: Նոր պայմաններում փոխվում են դասախոսի դերակատարումը, ուսանողների նկատմամբ վերաբերմունքը, դասավանդմանը, ուսումնառությանն ու ուսանողի գնահատմանը ներկայացվող պահանջները:

Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) 2019-2023 թթ. Ռազմավարական ծրագիրը, փոփոխվող պայմաններին համահունչ, բուհի զարգացման նոր տեսլական, նոր բարձրանիշ դրեց, որին հասնելու համար նախատեսվում է համալսարանի գործունեությունը դնել որակապես նոր հարթության վրա: ԱրՊՀ ղեկավարության կողմից նախատեսված և շահակիցների կողմից հավանության արժանացած կրթական բարեփոխումները ընդգրկում են հետևյալ ուղղությունները՝

- բարձրորակ կրթության նորագույն մոտեցումներ,
- տարածաշրջանային հետազոտություններ Արցախի հիմնախնդիրների լուծման գերակայությամբ,
- կողմնորոշված դիմորդներ և ուսումնառողներ,
- արդյունավետ կառավարում, ֆինանսական կայունություն, ժամանակակից ենթակառուցվածք,



➤ հանրային ներգրավում, սոցիալական համագործակցություն և ծառայություններ,

➤ արտաքին կապեր և միջազգային գործունեության ընդլայնում:

Այս ռազմավարական նպատակներին աջակցելու համար մշակվել է որակի ապահովման համակարգի մոդել, որն էլ ներկայացված է սույն ձեռնարկում: Որակի ապահովման ձեռնարկը կարևոր տեղեկատվության աղբյուր է հանդիսանում ԱրՊՀ աշխատակիցների և ուսանողության համար: Այն մատչելի ներկայացնում է «սովորող կազմակերպության»¹ կառավարման և կրթության որակի ապահովման (ՈԱ) քաղաքականությունն ու ընթացակարգերը, ծանոթացնում որակի ապահովման գործընթացներին և մեխանիզմներին: Ձեռնարկում զետեղված են որակի ապահովման քաղաքականությունը և սկզբունքները, ներկայացված են բուհի բոլոր գործընթացների պլանավորման, ծրագրերի իրագործման, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները: Ներքին և արտաքին շահակիցների համար բավարար հիմքեր են ստեղծված ուսանողներին, դիմորդներին և ընդհանուր առմամբ հանրությանը համոզելու, որ մատուցվող ծառայություններն անընդհատ բարելավվելու են, մշտապես ստուգվելու է մասնագիտության կրթական ծրագրերով (ՄԿԾ) շնորհվող որակավորումների արժանահավաստությունն ու հուսալիությունը: Ռազմավարական ծրագրում նշված յուրաքանչյուր գործողության իրագործումն ու արդյունավետության ստուգումը իրականացվում է ձեռնարկում ներկայացված որակի ապահովման մեխանիզմներով:

¹ «Սովորող կազմակերպություն» հայցեկարգը շրջանառության մեջ է դրվել ամերիկացի հետազոտող Փիթեր Սենջի կողմից <<5-րդ դիսցիպլին>> (<<The Fifth Discipline>>) աշխատությունում: Այն նշանակում է, որ մարդիկ իրենց նպատակներին հասնելու համար շարունակաբար ընդլայնում են իրենց կարողությունները և անընդհատ սովորում են՝ ինչպես սովորել միասին:

http://kmccenter.rid.go.th/kmc08/km_59/manual_59/Book6/The-Fifth-Discipline.pdf

ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում համալսարանն իրեն հռչակել է որպես «սովորող կազմակերպություն»

ՄԱՍ 1. ԱՐՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2019 թ. մշակված ԱրՊՀ որակի ապահովման քաղաքականությունը ուղղված է համալսարանի առաքելության, ինստիտուցիոնալ նպատակների և 2019-2023 թթ. ռազմավարական ծրագրի իրագործմանը:

Որակի ապահովման քաղաքականությունը կողմնորոշված է ռազմավարության նախատեսված վերջնարդյունքներին, արդյունավետության գնահատման համակարգված մոտեցմանը: Այն տվյալներ և տեղեկատվություն է ապահովում բուհի զարգացման վերաբերյալ, պայմաններ է ստեղծում արտաքին գնահատման համար: ԱրՊՀ որակի ապահովման քաղաքականությունը նպատակաուղղված է որակի մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, հաստատության առաջընթացին, կրթության որակի բարձրացման գործում շահակիցների պատասխանատվության բարձրացմանը, բոլոր մակարդակների համապատասխան գործընթացներում նրանց մասնակցության աճին:

ԱրՊՀ-ն՝ որպես կրթական ու գիտական բարձրագույն ուսումնական հաստատություն, իր առաքելությունն է համարում մասնագիտական գիտելիքներով, հմտություններով և կարողություններով օժտված մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը, կիրառական, գիտական հետազոտությունների կատարումը՝ իր գործունեությամբ նպաստելով համամարդկային և ազգային արժեքների տարածմանը:

Բուհում կրթական գործընթացի արդյունավետության բարձրացումը մեծապես պայմանավորված է կառավարման արդյունավետությամբ, իսկ վերջինս էլ՝ հետադարձ կապի արդյունավետ կառուցակարգերի մշակմամբ ու դրանց իրագործման միջոցների հստակեցմամբ: Բուհի տարբեր օղակների լիարժեք տեղեկացվածությունը հնարավոր է միայն հետադարձ կապի միջոցով, որն էլ կարող է նպաստել շահակիցների կարիքների վերհանմանը և հիմնավորված կառավարչական որոշումների կայացման աճին:

Կրթության որակի ապահովումը համակարգային գործընթացների ամբողջություն է, որի կարևոր բաղկացուցիչն է ինստիտուցիոնալ կառավարման և կրթական գործընթացի կատարելագործումը: Այդ առումով հատկանշական են կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման և պարբերական վերանայման ընթացակարգային քայլերը, դրանց իրականացման մեխանիզմներն ու ժամանակացույցը: Կրթության որակի ապահովման մեջ առանձնահատուկ են ուսանողների գնահատ-

ման սկզբունքները և դրույթները, ինչպես նաև գնահատման գործընթացի կազմակերպման մեխանիզմները: Մյուս կարևոր կողմը վերաբերում է էթիկայի նորմերի կիրառմանը, որը նպաստում է ինչպես որակի ապահովմանը, այնպես էլ մարդկային ներուժի դրսևորմանը:

Կրթության որակի ապահովման և բարձրացման գործընթացը իրականացվում է մի շարք մեխանիզմներով, որոնք ընդգրկում են ՄԿԾ-ների պլանավորումը, իրականացման մշտադիտարկումը, ուսանողներին այլ ծառայությունների մատուցման գնահատումն ու մշտադիտարկումը: Կարևորվում են դասավանդման, ուսումնառության մեթոդների արդյունավետության վերաբերյալ հետադարձ կապի մեխանիզմների միջոցով հուսալի և արժանահավատ տեղեկատվության հավաքագրումը, դասախոսների ինքնագնահատումը և փոխգնահատումը: Մեծ տեղ է տրվում արտաքին գնահատմանը, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատագրմանը:

1.1. Որակի ապահովման քաղաքականության նպատակները և խնդիրները

Որակի ներքին ապահովման համակարգի հիմնական նպատակներն են՝

- սահմանված կրթական չափորոշիչների պահպանմամբ իրականացնել ԱրՊՀ կրթական ծրագրերն ու որակավորումների շնորհումը,
- բոլոր շահակիցների (ուսանողների, աշխատակիցների, գործատուների, հիմնադիրների և ֆինանսավորող այլ կազմակերպությունների) առջև ապահովել կրթության որակի համար ԱրՊՀ հաշվետվողականությունը,

- ԱրՊՀ և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար ստեղծել անհրաժեշտ մեթոդական և կազմակերպական հիմքեր,

- ԱրՊՀ-ում խթանել ուսուցման որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը,

- հետամուտ լինել ԱրՊՀ տեւականին, ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան առաքելության իրականացմանը,

- բարձրացնել մատուցվող կրթական ծառայությունների որակը:

Սահմանված նպատակներից բխում են ԱրՊՀ որակի ներքին ապահովման համակարգի հետևյալ խնդիրները՝

- որակի ապահովման սահմանված ընթացակարգերի և մեխանիզմների կիրառմամբ ապահովել կրթական ծրագրերի պատշաճ մշակումը, հաստատումը, ընթացիկ մոնիթորինգը, պարբերական վերանայումն ու շարունակական բարելավումը,



➤ կրթական ծրագրերի իրականացման որակի ինքնագնահատումը, արտաքին գնահատումն ու հավատարմագրումը իրականացնելու համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ,

➤ նախատեսել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ կրթության որակի ապահովման համար,

➤ ուսանողների և շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների մասնակցության ապահովմամբ բարձրացնել որակի ներքին ապահովման ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը,

➤ տեղեկություն տրամադրել ուսումնառության պայմանների՝ ՄԿԾ-ների նպատակներին համապատասխան լինելու մասին,

➤ սահմանել ԱրՊՀ առաքելության և ռազմավարական նպատակների իրագործման արդյունավետ վերահսկողություն, անընդհատ մշտադիտարկել ծավալվող գործընթացները, ստեղծել գնահատման մեխանիզմներ և գործիքակազմ:

ԱրՊՀ որակի ներքին ապահովման քաղաքականությունը՝ ուղղված վերոնշյալ խնդիրների լուծմանը, հիմք է ստեղծում սահմանված նպատակների իրականացման համար:

1.2. Որակի ապահովման հիմնական սկզբունքները

Մասնագիտական կրթության որակի ապահովումը մի գործընթաց է, որը նպատակաուղղված է որակի պահպանմանն ու բարձրացմանը. այն է՝ դասավանդում և ուսումնառություն, հետազոտություններ, ծառայությունների մատուցում հասարակությանը, վերլուծություն, պատշաճության մակարդակ, կադրերի հավաքագրում, նշանակման ընթացակարգեր և տարբեր մեխանիզմներ ու համակարգեր:

ԱրՊՀ որակի ապահովման հիմնական սկզբունքներն են՝

- համակարգված մոտեցում որակի ապահովման գործընթացների նկատմամբ,

- կենտրոնացում պատվիրատուի կարիքների վրա (ուսանողների, աշխատաշուկայի, հասարակության),

- որոշումների կայացում՝ ստուգված փաստերի հիման վրա,

- որակի ապահովման գործընթացների շուրջ ժողովրդավարական և բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում,

- բոլոր շահակիցների ներգրավվածություն, ներառում պլանավորման և գնահատման գործընթացներում,



- առաջնորդություն (բուհը ոչ միայն արցախյան հասարակության պահանջների կատարողն է, այլ նաև տեսլականի, զարգացման հեռանկարների մշակողը),
- կենտրոնացում ՄԿԾ վերջնարդյունքների վրա,
- որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների թափանցիկություն,
- բոլոր մակարդակներում հաշվետվողականություն,
- որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների անընդհատություն,
- բուհի բոլոր գործընթացներում որակի ապահովման շրջափուլի ինտեգրում,
- ծրագրերի որոշակիություն, չափելիություն, հասանելիություն, իրագործելիություն, ժամանակի մեջ հստակ կանխորոշվածություն:

1.3. Որակի ապահովման ռազմավարությունը

Որակի ապահովման ԱրՊՀ ռազմավարությունը բուհի գործունեության բոլոր մակարդակներում և բնագավառներում անցումն է արտաքին վերահսկողությունից ինքնավերահսկողության: Դրան հասնելու համար նախատեսվում է՝

- պարբերաբար բարելավել որակի ապահովման ներքին համակարգը՝ որակի ապահովման շրջափուլի համաձայն²,
- նպատակաուղղված աշխատանք տանել՝ ապահովելու շահակիցների տեղեկատվությունն ու ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին, հստակեցնել և հրապարակել նպատակները: Նպատակները բոլոր աշխատողների համար պետք է լինեն հասանելի և պարզ: Դա կհանգեցնի պատասխանատվության բարձրացմանը, որակի ապահովման նկատմամբ գիտակցված մոտեցման ձևավորմանը: Աշխատանքի վերստուգումը պետք է ծառայի ոչ միայն թերությունների վերհանմանը (քանի որ թերություններով աշխատելն ի սկզբանե պետք է բացառվի), այլև գործընթացների կատարելագործմանը, ծախսերի կրճատմանը,
- ձևավորել այնպիսի գիտակցություն, որ որակի ապահովման գործընթացը շարունակական է, որակի ապահովման համար պատասխանատու են բոլորը: Կարգախոսը պետք է լինի՝ *որակի անվերջ բարելավում*,

² «Որակի ապահովման շրջափուլ» (մասնագիտական գրականության մեջ հանդիպում է «Դեմինգի շրջափուլ» անվամբ կամ PDCA շրջափուլ, հայերեն՝ ՊԻՄԲ) ասելով՝ նկատի ունենք բոլոր ծրագրերի պլանավորումը, իրագործումը, ստուգումը, գնահատումը և բարելավումը:

➤ բուհում ընթացող բոլոր գործընթացները (կադրային քաղաքականություն, ռեսուրսային բազայի հարստացում, ֆինանսական միջոցների վերաբաշխում և այլն) գնահատել ուսանողների կողմից ՄԿԾ-ով նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերման տեսանկյունից: ՄԿԾ որակի գնահատման ընթացակարգերը փոխկապակցել աշխատաշուկայի կարիքների հետ, ՄԿԾ-ով նախատեսվող կոմպետենցիաները համեմատել աշխատողին ներկայացվող պահանջների հետ: Անցկացնել շրջանավարտների հարցում, նրանց հաջողությունների, ձախողումների, ՄԿԾ ակտուալության վերաբերյալ: Հարցման արդյունքները օգտագործել ծրագրերի բարելավման համար,

➤ կարևորել ուսանողների և աշխատակիցների կարծիքը մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ,

➤ հետևել, որ պահպանվի բուհի կառավարման էթիկան, ինչը նշանակում է որոշումների կայացմանը ներքին շահակիցների ներգրավում, բուհի նպատակների և խնդիրների մեջ նրանց կարիքների հաշվառում, գնահատման և մշտադիտարկման մեխանիզմների միջոցով անընդհատ բարելավման ապահովում, վերից վար հաշվետվողականություն,

➤ մշտադիտարկել և տեղեկատվություն հավաքագրել կրթության և գիտական հետազոտությունների միջև կապի վերաբերյալ ,

➤ գնահատել արտաքին կապերի զարգացման արդյունավետությունը:

1.4. Որակի ապահովման համակարգը

ԱրՊՀ որակի ապահովման համակարգը ցանցային է: Այն ներառում է որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ), համալսարանի հիմնական ստորաբաժանումները և կառույցները, ուսանողները, արտաքին շահակիցները:

ՈԱԿ-ն կոչված է աջակցելու և վերահսկելու որակի ապահովման համակարգի ներդրումն ու զարգացումը, հետևելու որակի ապահովման գործընթացների անշեղ իրագործմանը, համալսարանում որակի ապահովման մեխանիզմների գործադրմանը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանմանը: Որակի ապահովման կենտրոնը գործում է հաստատված կանոնադրության համաձայն /տե՛ս Հավելված 1/:

ՈԱԿ խնդիրներն են.

✓ ԱրՊՀ ՈԱ քաղաքականության և ռազմավարության մշակման գործընթացին մասնակցություն ու աջակցություն դրանց իրագործմանը,

✓ որակի միասնական չափանիշների պահպանում, ՈԱ գործընթացների ներդաշնակեցում և իրականացում ԱրՊՀ գործունեության բոլոր հիմնական բնագավառներում,

✓ կրթության որակի համար ԱրՊՀ հաշվետվողականության ապահովում ներքին (ուսանողներ, դասախոսական ու վարչական կազմ, այլ աշխատողներ) և արտաքին (դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, կառավարություն, լիազոր մարմին) շահակիցների առջև,

✓ կանոնակարգային և կազմակերպական հենքի ստեղծում ու վարչական օժանդակություն համալսարանի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման ու հավատարմագրման համար, որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապի ապահովում,

✓ ազգային, տարածաշրջանային, միջազգային ՈԱ գործակալությունների ու համալսարանների ՈԱԿ-ների հետ կապերի հաստատում և ամրապնդում:


ԱրՊՀ ՈԱԿ-ն ունի օժանդակման, խորհրդատվական, վերահսկման, կազմակերպչական, համակարգման գործառույթներ:

Այն ղեկավարում է կենտրոնի վարիչը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ԱրՊՀ ռեկտորը: Կենտրոնում աշխատում են երկու մեթոդիստ և մեկ մասնագետ: Կենտրոնի վարիչը իրականացնում է կենտրոնի աշխատանքների կոորդինացում և վերահսկում, կենտրոնի գործունեությանը առնչվող վերլուծություններ:

Կենտրոնի վարիչը ԱրՊՀ ռեկտորատում և գիտական խորհրդում պարբերաբար հանդես է գալիս հաշվետվություններով, զեկույցներով և հաղորդումներով: Նա կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ նվիրված ԱրՊՀ համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվող և կենտրոնի գործունեությանն առնչվող աշխատանքներին:

Կենտրոնը համակարգում է համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատումը և վերլուծությունը, պատասխանատու է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգման և իրականացման ու չափման գործիքակազմի մշակման և ներդրման համար, գնահատում է դասախոսական կազմի ուսումնամեթոդական գործունեությունը և դրա արդյունավետությունը:

Մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նպատակով ՈԱԿ հետազոտությունները, վերլուծությունները, առաջարկները կարող են հիմք հանդիսանալ կառավարման մարմնի կողմից որոշումների ընդունման համար:




ՄԱՍ 2. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Որակի ապահովման հիմնական գործընթացները

Ռազմավարական ծրագրի նպատակ 1՝

ՄԿԾ-ները դարձնել աշխատաշուկայի պահանջներին համահունչ՝ հազեցված անհրաժեշտ ռեսուրսներով և ապահովված համապատասխան դասախոսական ներուժով:

Խնդիրներ	Վերջնարդյունքներ	ՈԱ մեխանիզմներ
1.1. ՄԿԾ-ները դարձնել Արցախի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան	Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) բնութագրիչներին և շուկայի պահանջներին համապատասխան բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր	ՄԿԾ վերլուծություն բուհի առաքելությանը համապատասխանության տեսանկյունից
		ՄԿԾ վերլուծություն ՈԱՇ բնութագրիչներին համապատասխանության տեսանկյունից
		ՄԿԾ-ների վերաբերյալ արտաքին փորձագիտական կարծիքների ապահովում, մասնագիտական կարողություններին վերաբերող կայքերի տեղեկատվության ուսումնասիրություն
		Դասավանդման և ուսումնառության, մատուցվող ծառայությունների վերաբերյալ ուսանողների հարցում/ֆոկլուս խմբերի անցկացում




		Դասընթացների ծրագրերի և դասախոսների փոխզնահատում, արտաքին փորձագետի գնահատում
		Փորձուսուցման աշխատավայրից կազմակերպիչների կարծիքների ապահովում ուսանողների գործնական կարողությունների վերաբերյալ
		Բենչմարքինգ նմանատիպ ՄԿԾ-ների հետ
		Շրջանավարտների հարցում
		Գործատուների հարցում
		ՄԿԾ-ների ինքնավերլուծություն
1.2. Իրականացնել հետազոտահեն կրթություն	Վերանայված բոլոր ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի առկայություն	ՄԿԾ-ների ինքնավերլուծություն
		ՄԿԾ-ների մշտադիտարկում
1.3. Ձևավորել առցանց ուսուցման հարթակ	Բոլոր ՄԿԾ-ներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում	Դասախոսների հարցում առցանց ուսուցման տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության վերաբերյալ
		Ուսանողների հարցում առցանց ուսուցման տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության

		վերաբերյալ / ֆոկուս խմբերի անցկացում
1.4. Համալրել և կատարել լագործել պրոֆեսորադասախոսական կազմը՝ մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան	ՄԿԾ-ների կրթական վերջնարդյունքների ձևավորմանը նպաստող պրոֆեսորադասախոսական կազմի առկայություն	Պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորում
		Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման մշտադիտարկում
		Դասախոսների կողմից հաշվետվության ներկայացում

Ռազմավարական ծրագրի նպատակ 2՝

Ձևավորել մրցունակ գիտական և նորարարական մարդկային ներուժ, որը կկարողանա հետազոտել և շարունակական լուծումներ առաջարկել Արցախի Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ, կնպաստի հանրապետության անվտանգության ամրապնդմանը, կայուն զարգացմանը, միջազգային ինտեգրմանը

Խնդիրներ	Վերջնարդյունքներ	ՈԱ մեխանիզմներ
2.1. Ձևավորել անհրաժեշտ ներառական միջավայր գիտության բոլոր բնագավառների ուղղությամբ ԱրՊՀ-ում հիմնարար, հիմնախնդրային, կիրառական շեշտադրմամբ հետազոտությունների համար	Արդիական և առևտրայնացման ենթակա հետազոտություններ	Գիտահետազոտական գործունեության մշտադիտարկում
2.2. Ներգրավել ՀՀ և միջազգային հետազոտական ներուժը ԱրՊՀ-ում իրականացվող նախագծերին	Արտաքին շահակիցների հետ իրականացվող հետազոտական ծրագրերի առկայություն	




2.3. Նպաստել գիտահրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը	ԱրՊՀ դասախոսների կողմից հրատարակված աշխատություններ	
---	---	--

Ռազմավարական ծրագրի նպատակ 3՝

Ուսումնառողների մասնագիտական կողմնորոշում: Ապագա դիմորդների նախաբուհական աջակցման (ուղեկցման, ուղղորդման) համակարգի զարգացում: Ուսումնառողների ներգրավման և առաջընթացի ապահովում համալսարանական միջավայրում

Խնդիրներ	Վերջնարդյունքներ	ՈԱ մեխանիզմներ
3.1. Համալսարանի՝ որպես սոցիալական կողմնորոշում ունեցող բուհի դրական վարկանիշի ստեղծում՝ ի նպաստ դիմորդների ներգրավման	Համալսարանի ձևավորված դրական վարկանիշ	Արտաքին շահակիցների /դպրոցի շրջանավարտների և նրանց ծնողների/ հարցում բուհի գործունեության վերաբերյալ /հասարակության համար արդիական լինելը, ծրագրերի արդյունավետությունը/
		Լրացուցիչ կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների հարցում
3.2. Մշակել և կազմակերպել աշակերտների շրջանում ԱրՊՀ մասնագիտությունների գրավչության ամրապնդմանը, դիմորդների ներգրավմանը նպաստող միջոցառումներ	Ուսանողների հավաքագրման և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ	Դիմորդների հարցում
3.3. Ուսանողների ինքնավարության ընդլայնում	Ուսանողների գործունեականացություն բուհի կառա-	Ուսանողների հարցում /ֆոկուս խմբերի անցկացում




	վարմանը	
3.4. Ուսանողներին տրամադրվող օժանդակ ծառայությունների արդյունավետության բարձրացում	Կրթական ծրագրերի պահանջներին համարժեք և հասանելի ուսումնառությանը օժանդակող մեխանիզմներ	

Ռազմավարական ծրագրի նպատակ 4՝

Բարելավել համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը

Խնդիրներ	Վերջնարդյունքներ	ՈԱ մեխանիզմներ
4.1. Կատարելագործել համալսարանի կազմակերպական կառուցվածքը	Համալսարանի ռազմավարական ծրագրի նպատակներին համապատասխանող կազմակերպական կառուցվածք	Ներքին շահակիցների հարցում
		Ստորաբաժանումների հաշվետվությունների գնահատում՝ ըստ ռազմավարական ծրագրի իրականացման
4.2. Համապատասխանեցնել ֆինանսների կառավարումը ռազմավարական նպատակների իրագործմանը	Արդյունավետ և թափանցիկ ֆինանսական կառավարման համակարգ	Ֆինանսական աուդիտ
		Աշխատողների հարցումների արդյունքները աշխատավարձից բավարվածության մասին
4.3. Համապատասխանեցնել ակադեմիական և ֆունկցիոնալ ռեսուրսների կառավարումը բուհի ռազմավարական նպատակներին	Բուհի ակադեմիական ռեսուրսները համապատասխանում են ակադեմիական վերջնարդյունքներին: Բուհի ֆունկցիոնալ ռեսուրսները	Ներքին և արտաքին շահակիցների հարցումներ




	աշխատանքի համար հարմարավետ միջավայր են ապահովում	
4.4. Համապատասխանեցնել մարդկային ռեսուրսների կառավարումը բուհի ռազմավարական նպատակներին	Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման համակարգ	Վարչական աշխատակազմի ատեստավորում
		Համալսարանի կառավարման և որոշումների կայացման գործընթացում պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության վերաբերյալ հարցում

Ռազմավարական ծրագրի նպատակ 5՝

Աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով համալսարանի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը

Խնդիրներ	Վերջնարդյունքներ	ՈԱ մեխանիզմներ
5.1. Հասարակության առջև բուհի հաշվետվողականության բարձրացում	Բուհի նկատմամբ հասարակության վստահության բարձրացում	Հանրային կապերի բնագավառում համալսարանի վարկանիշի մշտադիտարկում
5.2. Կազմակերպել կրթական, տնտեսական, սոցիալական, գիտական և մշակութային միջոցառումներ՝ բուհի ռազմավարական նպատակներին համապատասխան	Հանրային ծրագրերում համալսարանի ներգրավում	




Ռազմավարական ծրագրի նպատակ 6՝
Ապահովել համալսարանի արտաքին կապերի համակողմանի
զարգացումը, խթանել ԱրՊՀ գործունեության միջազգայնացումը

Խնդիրներ	Վերջնարդյունքներ	ՈԱ մեխանիզմներ
6.1. Ընդլայնել և բազմազանեցնել համալսարանի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները արտերկրի համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ ու ծրագրային մակարդակներում	Համալսարանի ռազմավարական ծրագրի նպատակներին համապատասխան միջազգային գործունեության ընդլայնման արդյունքում իրագործված ծրագրեր	Արտաքին կապերի զարգացման մշտադիտարկում Փոխանակման ծրագրերին մասնակցած դասախոսների և ուսանողների հարցումներ
6.2. Ընդլայնել համալսարանի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել համալսարանի ներգրավմանը արտերկրյա հետազոտական տարածքին	Համալսարանի ներգրավվածությունը միջազգային գիտահետազոտական ծրագրերում	Գիտահետազոտական բնագավառում արտաքին կապերի արդյունավետությունը գնահատող մշտադիտարկում
6.3. Բազմազանեցնել գործընկերային կապերը համալսարանի պատվիրատու կազմակերպությունների և հանրապետական հանրային կառույցների հետ	Գործատու և հանրային կառույցների հետ բազմազանեցված գործընկերային կապերի առկայություն /պայմանագրեր, իրականացված ծրագրեր և այլն/	Գործընկերային կապերի արդյունավետության մշտադիտարկում


2.2 Որակի կառավարման գործընթացների պարբերականությունը

	Գործընթացի անվանումը	Իրականացման պարբերականություն
1	ՄԿԾ-ների վերաբերյալ արտաքին փորձագիտական կարծիքների ապահովում, մասնագիտական կարողություններին վերաբերող կայքերի ուսումնասիրություն	Նոր ծրագրի ներմուծման (կամ գոյություն ունեցող ծրագրի վերանայման) ժամկետներին համապատասխան
2	Դասավանդման և ուսումնառության, մատուցվող ծառայությունների վերաբերյալ ուսանողների հարցում/ֆոկուս խմբերի անցկացում	Տարին 1 անգամ
3	Դասընթացների ծրագրերի և դասախոսների փոխգնահատում, արտաքին փորձագետի գնահատում	Առնվազն կիսամյակը 1 անգամ
4	Փորձուսուցման աշխատավայրից կազմակերպիչների՝ ուսանողների գործնական կարողությունների վերաբերյալ կարծիքների ապահովում	Յուրաքանչյուր փորձուսուցման ավարտից հետո 1 շաբաթյա ժամանակահատվածում
5	Բենչմարքինգ նմանատիպ ՄԿԾ-ների հետ	Նոր ծրագրի մշակման (կամ գոյություն ունեցող ծրագրի վերանայման) ընթացքում
6	Շրջանավարտների հարցում ՄԿԾ-ների՝ շուկայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ	2 տարին 1 անգամ
7	Գործատուների հարցում	2 տարին 1 անգամ
8	ՄԿԾ ինքնավերլուծություն	Տարին 1 անգամ
9	ՄԿԾ-ների մշտադիտարկում և գնահատում՝ հետազոտահեն բաղադրիչի ավելացման առումով	Տարին 1 անգամ

10	Դասախոսների հարցում առցանց ուսուցման տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության վերաբերյալ	Տարին 2 անգամ
11	Ուսանողների հարցում առցանց ուսուցման տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության վերաբերյալ/ ֆոկուս խմբերի անցկացում	Տարին 2 անգամ
12	Պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորում	5 տարին մեկ
13	Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման մշտադիտարկում	5 տարին մեկ
14	Դասախոսների կողմից հաշվետվության ներկայացում	Տարին 1 անգամ
15	Գիտահետազոտական գործունեության մշտադիտարկում և գնահատում	Տարին 1 անգամ
16	Արտաքին շահակիցների /դպրոցի շրջանավարտների և նրանց ծնողների/ հարցում բուհի գործունեությունից բավարարվածության վերաբերյալ/հասարակական նշանակության, ծրագրերի որակի/	Տարին 1 անգամ
17	Լրացուցիչ կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների հարցում	Յուրաքանչյուր կրթական ծրագրի ավարտին
18	Դիմորդների հարցում	Տարին 1 անգամ
19	Ուսանողների ինքնավարության ընդլայնման վերաբերյալ ուսանողների հարցում	2 տարին 1 անգամ
20	Ուսանողներին տրամադրվող օժանդակ ծառայությունների արդյունավետության բարձրացման վերաբերյալ հարցում	2 տարին 1 անգամ
21	Համալսարանի կազմակերպական կառուցվածքի արդյունավետության վերաբերյալ ներքին շահակիցների հարցում	2 տարին 1 անգամ



22	Ստորաբաժանումների հաշվետվությունների գնահատում ըստ ռազմավարական ծրագրի իրականացման	Տարին 1 անգամ
23	Ֆինանսական աուդիտի եզրակացության ուսումնասիրություն	Յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո
24	Աշխատողների հարցումների արդյունքները աշխատավարձից բավարվածության աստիճանի մասին	3 տարին մեկ
25	Ակադեմիական և ֆունկցիոնալ ռեսուրսների՝ ռազմավարական նպատակներին համապատասխանության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների հարցումներ	3 տարին մեկ
26	Վարչական աշխատակազմի ատեստավորում	4 տարին մեկ
27	Համալսարանի կառավարման և որոշումների կայացման գործընթացում պրոֆեսորադասախոսական կազմի և վարչակազմի մասնակցության վերաբերյալ հարցում	2 տարին 1 անգամ
28	Հանրային կապերի ոլորտում համալսարանի վարկանիշի մշտադիտարկում	3 տարին 1 անգամ
29	Արտաքին կապերի զարգացման մշտադիտարկում	Տարին 1 անգամ
30	Փոխանակման ծրագրերին մասնակցած դասախոսների և ուսանողների հարցումներ	Յուրաքանչյուր փոխանակման ծրագրի ավարտից հետո
31	Գիտահետազոտական բնագավառում արտաքին կապերի արդյունավետությունը գնահատող մշտադիտարկում	Տարին 1 անգամ
32	Գործընկերային կապերի մշտադիտարկում	Տարին 1 անգամ



ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

«Որակ» հասկացությունը, որը դրված է ԱրՊՀ որակի ապահովման համակարգի հիմքում, «նպատակին համապատասխանություն» և «նպատակի համարժեքություն» սկզբունքների համատեղ ապահովումն է: ԱրՊՀ-ն, նրա կառույցներն ու գործընթացները որակյալ են, եթե համապատասխանում են այն նպատակին, որի համար նախատեսված են: Մյուս կողմից, բուն նպատակներն ինքնին պետք է լինեն հիմնավորված, համարժեք և տեղին:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմ³

Պրոֆեսորադասախոսական անձնակազմը աշխատակազմ է, որն ուսուցանում և հետազոտություններ է կատարում ուսումնական հաստատություններում, օրինակ՝ պրոֆեսորներ, դոցենտներ, դասախոսներ և պրոֆեսորների օգնականներ:


Հաշվետվողականություն

Հաշվետվողականությունը ընդհանուր եզրույթ է, որը նկարագրում է կազմակերպությունների պատասխանատվությունը կամ այն գործընթացը, որով նրանք բացատրում կամ արդարացնում են իրենց կատարողականությունը իրենց շահակիցների և հասարակության առջև:

Հավատարմագրում

1. Հավատարմագրումը գործընթաց է, որով պետական կամ մասնավոր կազմակերպությունը գնահատում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ կոնկրետ կրթական ծրագրի որակը՝ նախասահմանված որոշակի նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրա համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու նպատակով: Այս գործընթացի արդյունքում ուսումնական հաստատությանը տրվում է ճանաչման կարգավիճակ (հավատարմագրված/ չհավատարմագրված), երբեմն էլ գործունեությունը թույլատրող լիցենզիա՝ սահմանափակ վավերականության ժամկետով:

³ Որակի ապահովման տերմինաբանական բառարան (աշխատանքային նյութեր) ՈԱԱԿ
<http://www.anqa.am/en/publications/glossary-of-quality-assurance/>



Գործընթացը կարող է ներառել նախնական և շարունակական ինքնավերլուծություն հաստատության կողմից և գնահատում արտաքին փորձագետների կողմից:

2. Գործընթաց, որի շնորհիվ մեկ մասնագիտական ուսումնական հաստատություն իրավունք է ձեռք բերում շնորհելու որակավորումներ կամ ճանաչվում է մեկ այլ իրավասու մարմնի կողմից: Վերջինս կարող է լինել Պետությունը, որևէ կառավարական մարմին կամ տեղական/արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատություն:

Ձեռքբերումների գնահատում

Ձեռքբերումների գնահատումը գործընթաց է, որն արտացոլում է, թե որքանով է բուհը իրականացնում իր նպատակները:


Գնահատում

1. ***Գնահատումը*** տեղեկատվության կանոնավոր հավաքման, դասակարգման և կիրառման գործընթաց է, որը միտված է որոշելու բարձրագույն ուսումնական հաստատության (ինստիտուցիոնալ գնահատում) կամ դրա կրթական ծրագրերի (ծրագրային գնահատում) կառուցվածքային արդյունավետությունը և ծրագրային համապատասխանությունը: Այն ներառում է բարձրագույն ուսումնական հաստատության ամբողջական գործունեության գնահատումը (ուսումնառության և հետազոտության արդյունքների քանակական և որակական փաստեր): Գնահատումն անհրաժեշտ է հավատարմագրման պաշտոնական որոշումը վավերացնելու համար, բայց այն պարտադիր կերպով չի հանգեցնում հավատարմագրման:

2. Տեխնիկապես մշակված գործընթաց է՝ ուսանողների ուսումնառության արդյունքները գնահատելու, նրանց ուսումնառությունը և զարգացումը բարելավելու, ինչպես նաև ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Փորձաքննություն

Փորձաքննությունը որևէ մասնագիտական ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի ուսումնասիրություն/վերանայում է՝ որոշելու, թե արդյոք իրականացվում են սահմանված նպատակները՝ կապված ուսումնական պլանի, աշխատակազմի, ենթակառուցվածքների և այլնի հետ:



Փորձաքննության զեկույց/ Գնահատման զեկույց

ա) **Փորձաքննության զեկույցը** որակի գնահատման փորձագիտական խմբի՝ ուսումնական հաստատություն կատարած ստուգայցին հաջորդող փաստաթուղթ է, որը ընդհանրապես կենտրոնացած է ինստիտուցիոնալ որակի, ակադեմիական/կրթական չափորոշիչների, ուսումնառության միջավայրի և աշխատակազմի ընտրության վրա: Մասնագիտական ուսումնական հաստատությանը վերաբերող զեկույցը նկարագրում է հաստատության որակի ապահովման գործընթացները և դրանց ազդեցությունը կրթական ծրագրերի որակի վրա: Փորձաքննության զեկույցը ուսումնական հաստատությանը սկզբում հասանելի է սևագիր տարբերակով՝ դիտորդություններ անելու նպատակով, իսկ հետո՝ իր վերջնական, պաշտոնական տարբերակով: Բացի բուն բովանդակությունից՝ այն ներառում է նաև փորձաքննության մեթոդաբանության նկարագիրը, արված բացահայտումները, փորձագետների եզրակացությունը և զանազան հավելվածներ՝ տրված հարցերի ներառմամբ: Եվրոպայում այս փաստաթուղթը հաճախ կոչվում է «գնահատման զեկույց»:

բ) Այսպիսի զեկույց կարող է նաև պատրաստվել հավատարմագրող կազմակերպության վերաբերյալ՝ նկարագրելով վերջինիս որակի ապահովման գործընթացները և դրանց ազդեցությունը այն հաստատությունների կրթական ծրագրերի որակի վրա, որոնց համար հավատարմագրող կազմակերպությունը պատասխանատվություն է կրում:

Բարձրագույն կրթության մեջ որակի ապահովմանը և հավատարմագրմանը վերաբերող (պրոֆեսիոնալ) էթիկայի նորմեր

Հանրային փաստաթուղթ, որը բարձրագույն կրթության որակի ապահովման և հավատարմագրման գործընթացների համար սահմանում է էթիկական վարվելակերպի և որոշումների ընդունման շրջանակ: Հանդիսանալով բարձրագույն կրթության որակի ներքին և արտաքին ապահովման գործում թափանցիկություն և համեմատելիություն ապահովող արդյունավետ գործիք՝ էթիկայի նորմերը սովորաբար բաղկացած են մի շարք հիմնական սկզբունքներից, արժեքներից և գործունեության կանոններից: Սրանք պետք է դիտվեն որպես հղման կետեր որակի ապահովման և հավատարմագրման գործընթացներում՝ նորմերի հետ համապատասխանությունը ապահովող մի շարք ընթացակարգային կանոնակարգերին զուգահեռ: Համապատասխանեցվելով տվյալ ուսումնական հաստատու-

թյան կարիքներին և արժեքներին՝ էթիկայի նորմերը կարող են անդրադառնալ այնպիսի խնդիրների, ինչպիսիք են շահերի բախումը, գաղտնիությունը, մտավոր կարողությունը, մշտական զարգացումը, վստահությունը և այլն:


Բարձրագույն ուսումնական հաստատություն

Բարձրագույն ուսումնական հաստատությունը (բուհ) ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է բարձրագույն կրթություն՝ օրենքով հաստատված կրթական ծրագրերի միջոցով: Ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատություն պետք է անցնի արտաքին գնահատում, որպեսզի գնահատի իր որակը և ստանա ժամանակավոր գործունեության լիազորություն, որին կհաջորդի ուսումնական հաստատության, ինչպես նաև նրա կրթական ծրագրերի պաշտոնական հավատարմագրումը: Ընդհանրապես, այս պահանջը պարտադիր է բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ բարձրագույն կրթություն ապահովող կազմակերպությունների համար և իրավունք է տալիս բուհերին բարեհաջող հանգուցալուծման դեպքում կրել *համալսարան* կամ այլ օրինական ճանաչված անվանում: Բուհերը նաև պատասխանատվություն են կրում իրենց գործունեության որակի և դրա ապահովման համար: Բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են տարբերվել ըստ իրենց մեծության, որակի, ռեսուրսների, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների քանակի և այլնի, քանի որ հաջողակ բուհերը հաճախ պետք է հավասարակշռություն ստեղծեն իրար հետ չհամընկնող շահակիցների պահանջների և ինստիտուցիոնալ արժեքների միջև:

Հետևաբար բուհերը կարող են լինել տեղական կամ համընդհանուր, էլիտար կամ մասսայական, մասնագիտացված կամ անդրառարկայական, կարող են որդեգրել կամ կրթական մշակույթ, որը բնութագրվում է գիտելիքների ստեղծմամբ, գիտական կատարելությամբ, ակադեմիական ազատություններով և ազատորեն կիսվող արդյունքներով, կամ բիզնես-մշակույթ, որը բնորոշվում է շահույթի ստեղծմամբ և սոցիալական հարստության անհատական յուրացմամբ:

Ցուցիչներ

Ցուցիչները գործառնական փոփոխականներ են, որոնք հղում են կատարում բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ կրթական ծրագրերի որոշակի չափերի բնութագրիչներին, որոնց հիման վրա կարելի




է հավաքել չափորոշիչների պահպանվելն ու չպահպանվելը հավաստող ապացույցներ: Ցուցիչները սահմանում են կատարողականի միտումները և խնդրահարույց բնագավառները, ինչպես նաև հնարավորություն են ընձեռում համեմատելու առկա կատարողականությունը սահմանված նպատակների հետ: Ցուցիչները նաև կիրառվում են որակի հետ կապված տեսական կետերը իրագործելիս՝ դրանք դարձնելով ընթացակարգեր. այս գործընթացը կոչվում է գործառնականացում:

Ցուցիչը պետք է տարբերակվի չափման միավորից, որը որոշում է հետաքրքրության առարկայի կատարողականության մակարդակը, ցուցիչը պետք է տարբերվի նաև չափորոշիչից, որը կատարողականության ընդունելի մակարդակն է՝ չափված որոշակի թվային չափանիշներով: Տարբերակվում են նաև ցուցիչների տարբեր տեսակները՝ տնտեսական, կրթության գործունակության և կրթության արդյունավետության: Երրորդ և տրամաբանորեն հաջորդական տարբերությունը դրվում է ցուցիչների հետևյալ տեսակների միջև՝ *ա) համատեքստի ցուցիչներ*, որոնք վերաբերում են բարձրագույն ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի որևէ առանձնահատուկ միջավայրին (սոցիալական, տնտեսական, քաղաքական, աշխարհագրական և այլն), *բ) ներդրման ցուցիչներ*, որոնք վերաբերում են բարձրագույն ուսումնական հաստատության կողմից օգտագործվող նյութատեխնիկական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներին, *գ) գործընթացի ցուցիչներ*, որոնք վերաբերում են բարձրագույն ուսումնական հաստատության կողմից ռեսուրսների օգտագործմանը, ներդրումների կառավարմանը և կազմակերպության գործելուն, *դ) արդյունքի ցուցիչներ*, որոնք վերաբերում են բարձրագույն ուսումնական հաստատության իրական նվաճումներին կամ «արտադրանքին»: Այս շրջանակը նաև հայտնի է որպես ԲՆԳԱ մոդել (բովանդակություն, ներդրում, գործընթաց, արդյունք) և հաճախ օգտագործվում է գնահատման ուսումնասիրությունների ժամանակ:

Մետա-գնահատում

Մետա-գնահատումը գնահատման անմիջական գործընթացի գնահատում է: Այս գործընթացը կիրառվում է իրականացվող գնահատումը և գնահատողի կատարողականությունը գնահատելու նպատակով:



Որակավորումների ազգային շրջանակ

Որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ) ընդհանրապես մշակված է ազգային մակարդակում ճանաչվող և համատարր չափորոշիչներ ու որակավորումներ ապահովելու համար, ինչպես նաև ուսումնառության արդյունքների ու կարողությունների ճանաչումը երաշխավորելու համար և ապահովում է հիմք արդեն իսկ գոյություն ունեցող, նոր մշակվող որակավորումների հետագա վերանայման, հստակեցման և մշակման համար: Ի լրումն մնացած նպատակների՝ այն պետք է հեշտացնի ուսումնական ծրագրերի փոփոխությունները և թույլ տա մատչելիության բարելավումը, ավելացնի հասարակական ներգրավվածությունը, ինչպես նաև հաշվի առնի փոփոխվող սոցիալական կարիքները: Որակավորումների ազգային շրջանակը հիմնականում մշակվում է միջնաժամկետ գործընթացով՝ քաղաքականության մշակման և հասարակական խորհրդատվության արդյունքում: Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում առկա ՈԱՇ-երը պետք է լինեն համանման, քանի որ հիմնված են Որակավորումների եվրոպական շրջանակի վրա:

Արդյունքների գնահատում


Արդյունքների գնահատումը բարձրագույն ուսումնական հաստատության որոշակի արդյունքներ գնահատելու և բարելավելու գործընթաց է՝ վերջինիս ինստիտուցիոնալ արդյունավետությունը ցուցադրելու նպատակով: Գնահատումը կարող է վերաբերել դասախոսական կազմի կատարողականությանը, ինստիտուցիոնալ գործընթացների արդյունավետությանը և բաժինների ու կրթական ծրագրերի գործառնություններին:

Կատարողականի չափանիշներ

Կատարողականի չափանիշները ստուգման կետեր կամ բենչմարքեր են, որոնք օգտագործվում են՝ որոշելու կատարողականի չափանիշների պահպանումը: Կատարողականի չափանիշները ցուցադրում են, թե ուսանողները որքանով են արդարացնում այն սպասելիքները, որոնք վերաբերում են իմանալուն և կարողանալուն, ինչն էլ արտահայտվում է հաջողության փոփոխական գրադիենտներով (միավորներ ձևավորող), թեմաների միջոցով կամ գնահատականներով:

Կատարողականի չափորոշիչներ

Կատարողականի չափորոշիչները նվաճումների մակարդակ է, որը համարվում է օրինակելի կամ պատշաճ, այսինքն՝ ուսանողի աշխատանք




քի որակի պահանջվող մակարդակի մանրամասնում՝ բովանդակության չափորոշիչները բավարարելու նպատակով: Կատարողականի չափորոշիչները ձևավորում են ակնակիքները՝ կապված ուսուցման արդյունքների հետ:

Կատարողականի ցուցիչներ

Կատարողականի ցուցիչները վիճակագրական պարամետրեր են, որոնք ցույց են տալիս, թե բարձրագույն ուսումնական հաստատությունը կամ կրթական ծրագիրը որքանով է ապահովում որակը իր գործունեության ընթացքում: Կատարողականի ցուցիչները որոշակի համակարգի կամ ծրագրի արդյունքի որակական կամ քանակական կարճաժամկետ կամ երկարաժամկետ չափումներ են: Նրանք հնարավորություն են ընձեռում ուսումնական հաստատություններին՝ կատարելու իրենց իսկ գործունեության բենչմարքինգ կամ հնարավոր են դարձնում համեմատությունը մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև:

Կատարողականի ցուցիչներն արդյունավետ են գործում միայն այն դեպքում, երբ կիրառվում են ներդրման, գործընթացի և արդյունքի ցուցիչների հետ զուգահեռ:

Քանի որ մասնագիտական ուսումնական հաստատությունները ներգրավված են զանազան գործընթացներում և հետապնդում են զանազան նպատակներ, անհրաժեշտ է սահմանել և կիրառել կատարողականի ցուցիչների ստվար բազմություն՝ գործունեության ամբողջ դաշտը ծածկելու նպատակով: Հաճախ կիրառվող կատարողականի ցուցիչների օրինակներ են՝ որոշակի տեղի համար դիմումների քանակը, դիմողների ընդունելության քանակական տվյալները, աշխատակազմի ծանրաբեռնվածությունը, շրջանավարտների՝ աշխատանքի տեղավորվելու հնարավորությունը, հետազոտական դրամաշնորհային ծրագրերը և պայմանագրերը, հրատարակված հոդվածների կամ հետազոտական աշխատանքների քանակը, աշխատակազմ-ուսանողներ հարաբերակցությունը, հաստատության եկամուտն ու ծախսերը, և՛ հաստատության, և՛ բաժինների սարքավորումներն ու կահավորումը: Կատարողականի ցուցիչներն առնչվում են բենչմարքինգի հետ և սահմանվում են որոշակի պիլոտային գործընթացի արդյունքում՝ համեմատական կամ բնութագրիչ վերլուծության մեջ իրենց նպատակին լավագույնս ծառայելու համար:



Հավատարմագրման պորտֆոլիո

Հավատարմագրման պորտֆոլիոն ապացույցների կուտակում է (նվաճումների գրանցում) ուսումնական հաստատության գործունեության առանձնահատուկ տեսակի, մասնավորապես, ուսումնական չափորոշիչների հետ առնչվող որոշակի փորձառության կամ առանձնահատկությունների վերաբերյալ: Այս գործընթացը կարող է իրականացվել կամ ուսումնասիրվող հաստատության, կամ արտաքին գնահատողի կողմից:


Որակ (ակադեմիական)

Բարձրագույն կրթության մեջ *որակը* բազմաչափ, բազմամակարդակ և դինամիկ հասկացություն է, որը վերաբերում է կրթական մոդելի համատեքստին, ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին, ինչպես նաև որոշակի համակարգի, ուսումնական հաստատության, կրթական ծրագրի կամ առարկայի առանձնահատուկ չափորոշիչներին: Հետևաբար որակը կարող է ստանալ տարբեր, երբեմն հակասող նշանակություն՝ կախված՝ ա) բարձրագույն կրթության տարբեր, սպառողների և շահակիցների հետաքրքրություններից (օրինակ՝ ուսանողներ, համալսարաններ, առարկաներ, աշխատաշուկա, հասարակություն, կառավարություն և այլն), բ) հղման կետերից՝ ներդրում, գործընթաց, արդյունք, առաքելություն, նպատակներ և այլն, գ) կրթական աշխարհի բնութագրիչներից և առանձնահատկություններից, որոնք արժանի են գնահատման, դ) մասնագիտական կրթության զարգացման պատմական ժամանակահատվածից:

Որակը՝ որպես զարգացում կամ բարելավում

Որակը՝ որպես զարգացում կամ բարելավում սահմանմամբ շեշտը դրվում է մշտական զարգացմանը ուղղված շարունակական ջանքերի և բարձրագույն ուսումնական հաստատության՝ իր ինստիտուցիոնալ ինքնավարությունն ու ազատությունը ճիշտ օգտագործելու պատասխանատվության վրա: Որակի ապահովումը կրթության կարևորագույն բաղադրիչներից է և վկայում է, որ մանկավարժներն իրենք լավագույնը գիտեն, թե ինչ է որակը:

Որակը՝ որպես գերազանցություն ավանդական հասկացությունը նույնացվում է յուրահատուկ ծառայության կամ արտադրանքի հետ և այդ ծառայության կամ արտադրանքի համար կարգավիճակ է շնորհվում թե՛



ծառայություն տրամադրողին, թե՛ այդ ծառայությունից օգտվողին: Այս պարագայում, որակի չափումը գերազանցությունն է:

Որակը՝ որպես համապատասխանություն նպատակին

Որակը՝ որպես համապատասխանություն նպատակին մոտեցումը շեշտում է ընդհանուր, ընդունված չափորոշիչները բավարարելու անհրաժեշտությունը: Այդպիսի չափորոշիչներ են հավատարմագրման կամ որակի ապահովման գործակալության կողմից ընդունված չափորոշիչները, որոնք կենտրոնանում են ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի նպատակների և առաքելության իրականացման գործընթացների արդյունավետության վրա: Երբեմն որակը այս իմաստով դիտարկվում է որպես՝ ա) «արժեք՝ փողի դիմաց» մոտեցում, որը ցույց է տալիս, թե ինչպես են ներդրումները արդյունավետորեն կիրառվում առկա գործընթացներում և մեխանիզմներում, բ) «ավելացված արժեք» մոտեցում, երբ արդյունքները գնահատում են՝ կախված զանազան կրթական գործընթացներում կատարված փոփոխություններից (ուսուցման և ուսումնառության գործընթացներ): Երկրորդ մոտեցման տարբերակը բերում է որակի՝ որպես «փոխակերպման գործընթաց» մոտեցմանը, որը ծայրահեղ ուսանողակենտրոն է: Այն որակը դիտում է որպես փոփոխության գործընթաց՝ արժևորելով ուսանողներին իրենց ուսումնառության փորձի միջոցով:

Որակի այս սահմանումն ընդունված է վերլուծաբանների և բարձրագույն կրթության քաղաքականություն մշակողների մեծամասնության կողմից: Այս մոտեցումն առաջարկում է, որ որակը ոչ մի իմաստ չունի, եթե այն միտված չէ ծառայությունների կամ արտադրանքի նախանշված նպատակներին հասնելուն: Այս պարագայում որակը գնահատվում է՝ հիմք ընդունելով, թե որքանով է տվյալ ծառայությունը կամ արտադրանքը համապատասխանում նախանշված նպատակներին:


Որակի գնահատում/ Որակի վերանայում

Որակի գնահատումը արտացոլում է բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի արտաքին գնահատման (վերանայում, չափում, համեմատում) գործընթացը: Այն կազմված է արտաքին մարմնի՝ մասնագիտական կրթության գործընթացների, գործունեության, ծրագրերի և ծառայությունների որակը գնահատելու համար օգտագործվող հնարքներից, մեխանիզմներից և գործողություններից: Որոշ հայեցակետեր շատ կարևոր են, երբ սահմանում և կիրառում ենք որակի գնահատ-

ման գաղափարը՝ ա) համատեքստը (ազգային, ինստիտուցիոնալ), բ) մեթոդները (ինքնագնահատում, արտաքին փոխգնահատում, ստուգայց ուսումնական հաստատություն), գ) մակարդակները (համակարգ, ուսումնական հաստատություն, բաժանմունք, անհատներ), դ) մեխանիզմները (խրախուսում, քաղաքականություն, կառուցվածք, մշակույթ), ե) որակի գնահատմանը առնչվող որակի արժեհամակարգը, ինչպես օրինակ՝ ակադեմիական արժեքները, որոնք կենտրոնացած են մասնագիտական դաշտի վրա, կառավարման արժեքները, որոնք կենտրոնացած են դասավանդողների և նրանց դասավանդման ունակությունների ու լսարանային փորձառության վրա, աշխատանք գտնելու արժեքները, որոնք ընդգծում են շրջանավարտների ուսումնառության արդյունքների բնութագրիչները և ուսումնառության վերջնական արդյունքները:

Որակի ապահովում

Որակի ապահովումը ընդգրկում տերմին է, որը վերաբերում է բարձրագույն կրթության համակարգի, հաստատությունների կամ ծրագրերի որակի գնահատման (ստուգում, մշտադիտարկում, երաշխավորում, պահպանում և բարելավում) շարունակական գործընթացին: Որպես կանոնակարգման մեխանիզմ՝ որակի ապահովումը միաժամանակ կենտրոնացնում է հաշվետվողականության և բարելավման վրա՝ համաձայնեցված և հետևողական գործընթացի ու հստակ սահմանված չափանիշների միջոցով տրամադրելով տեղեկատվություն և կարծիք (առանց դասակարգման): Շատ համակարգեր տարբերություն են դնում որակի ներքին ապահովման (այսինքն՝ ուսումնական հաստատությունների գործնական մշտադիտարկման և մասնագիտական կրթության որակի բարելավման առումով) և որակի արտաքին ապահովման (այսինքն՝ բուհերի և ծրագրերի որակի ապահովման միջբուհական կամ արտաբուհական մեխանիզմներ) միջև: Որակի ապահովման միջոցառումները կախված են անհրաժեշտ ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունից, որոնք ցանկալի է, որ երաշխավորված լինեն որակի ապահովման հիմնավոր մշակույթով: Որակի ապահովման գործունեության շրջանակը որոշվում է մասնագիտական կրթության համակարգի կառուցվածքով և չափերով: Որակի կառավարումը, բարելավումը, վերահսկումը և գնահատումը որակի ապահովման գործընթացի իրականացման երաշխիքներն են: Որակի ապահովումը տարբերվում է հավատարմագրումից այն իմաստով, որ առաջինը վերջի-



նիս անհրաժեշտ նախապայմանն է միայն: Երկուսն էլ ներառում են գանազան հետևանքներ. ուսումնական հաստատությանը ընձեռում են գործունեություն ծավալելու և կրթական ծառայություններ մատուցելու, պաշտոնապես ճանաչված աստիճաններ շնորհելու և պետության կողմից ֆինանսավորվելու հնարավորություն: Որակի ապահովումը հաճախ համարվում է մասնագիտական կրթության որակի կառավարման մի մասը, մինչդեռ որակի ապահովումն ու հավատարմագրումը հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ:

Որակի փորձաքննություն

Որակի փորձաքննությունը որակի գնահատման գործընթաց է, որի միջոցով արտաքին մարմինը երաշխավորում է, որ՝ ա) ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի որակի ապահովման ընթացակարգերը, բ) համակարգի ողջ (ներքին և արտաքին) որակի ապահովման ընթացակարգերը համապատասխան/ընդունելի են և իսկապես իրագործվում են: Որակի փորձաքննությունը հետևում է ոչ թե բուն որակին, այլ այն բանին, որ համակարգը որակով գործի: Որակի փորձաքննությունը կարող է իրականացվել միայն այն անձանց (այսինքն՝ որակի աուդիտորների) կողմից, որոնք ուղղակիորեն ներգրավված չեն փորձաքննության ենթարկվող բնագավառում: Որակի փորձաքննությունները կարող են իրականացվել ներքին նպատակներին (ներքին փորձաքննություն) կամ արտաքին նպատակներին (արտաքին փորձաքննություն) համապատասխանելու համար: Փորձաքննության արդյունքները պետք է արձանագրվեն փորձաքննության հաշվետվության միջոցով:

Որակի վերահսկում

Որակի վերահսկումը որակի գնահատման գործընթաց է, որը կենտրոնանում է ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի որակի ներքին չափման վրա: Այն վերաբերում է մի շարք կիրառելի/արդյունավետ գործընթացների և հնարքների (մշտադիտարկման գործընթացներ և ներքին մակարդակում պլանավորված և իրականացված կառուցվածքային քաղաքականություն), որոնք կոնկրետացվում, հստակեցվում և կիրառվում են որակի պահանջները բավարարելու համար: Որակի վերահսկումը, հաճախ որակի կառավարման և որակի ապահովման հետ փոխարինաբար կիրառվելով, վերաբերում է գործողությունների և միջոցների համախմբին, որոնք պարբերաբար կիրառվում են՝ հավաստելու

բարձրագույն կրթության, արտադրանքի, ծառայությունների կամ գործընթացների որակը՝ շեշտադրելով, որ ապահովված է որակի համար սահմանված շեմը: Այն նպատակաուղղված է և՛ գործընթացի մշտադիտարկմանը, և՛ անբավարար գործառության հանգեցնող պատճառների վերացմանը: Երբեմն գործում է որակի նվազագույն վերահսկում, որը ծառայում է որպես ֆիլտրման մեխանիզմ՝ հաստատելու, որ բարձրագույն ուսումնական հաստատությունը բավարարում է որակի նվազագույն համաձայնեցված պահանջները և ունի որակի մշտադիտարկման համապատասխան մեխանիզմներ:


Որակի մշակույթ

Որակի մշակույթը որակի համընդունելի և ինտեգրված սկզբունքների համակարգ է (հաճախ կոչվում է որակի սկզբունքներ), որն առկա է ուսումնական հաստատության կազմակերպչական մշակույթում կամ կառավարման համակարգերում:

Բարձրագույն կրթության մեջ որակի իմացությունը և այն ապահովելու պարտավորվածությունը, «Փաստերի վրա հիմնված կայուն մշակույթի» և այդ որակին համապատասխան կառավարմամբ (որակի ապահովման ընթացակարգերի միջոցով) հանդերձ, կազմում են որակի մշակույթը: Քանի որ որակի բաղադրիչները ժամանակի ընթացքում փոփոխվում և զարգանում են, պետք է փոփոխվի նաև որակի ինտեգրված համակարգը՝ իր մոտեցումներով և կարգավորումներով (որակի մշակույթ)՝ բարձրագույն կրթության մեջ որակի նոր նմուշները/օրինակները ապահովելու նպատակով:

Որակի կառավարում

Որակի կառավարումը ենթադրում է միջոցների համախումբ, որը պարբերաբար կիրառվում է համակարգային կամ ինստիտուցիոնալ մակարդակում՝ բարձրագույն կրթության որակն ապահովելու համար՝ շեշտադրելով առհասարակ որակի բարելավումը: Լինելով ընդհանուր եզրույթ՝ այն ներառում է որակի քաղաքականության և նպատակների իրագործումը երաշխավորող բոլոր գործողություններն ու պատասխանատվությունը և ապահովում է դրանց գործառությունը որակի պլանավորման, վերահսկման, ապահովման և բարելավման մեխանիզմների միջոցով:



Որակի պլանավորում

Որակի պլանավորումը կազմված է մի շարք գործողություններից. այն սահմանում է բարձրագույն կրթության որակին և որակի համակարգի կիրառմանը վերաբերող նպատակներն ու պայմանները: Որակի պլանավորումը ներառում է արտադրանքի պլանավորումը (որակին վերաբերող հատկանիշների կարևորության նույնականացում, դասակարգում և որոշում, ինչպես նաև որակի հետ առնչվող նպատակների, որակին վերաբերող պայմանների և դրա սահմանափակումների հաստատում, կառավարման և գործառնության պլանավորումը (ներառում է բուհի գործունեության կազմակերպումը և կրթական ծրագրերի մշակումը), որակի ապահովման ծրագրերի զարգացումը և որակի բարելավման միջոցների ապահովումը:


Չափորոշիչներ

Ձևակերպումներ, որոնք վերաբերում են պահանջների և պայմանների որոշակի ակնկալվող մակարդակներին, որոնց համեմատությամբ պետք է գնահատվի և ձեռք բերվի մասնագիտական հաստատության կամ կրթական ծրագրերի անհրաժեշտ որակը՝ հավատարմագրվելու կամ արտոնագիր ստանալու համար:

«Չափորոշիչ» եզրույթը նշանակում է և՛ ֆիքսված/ամրագրված չափանիշ, որի միջոցով կարող է չափվել արդյունքը, և՛ ձեռքբերման մակարդակ: Որպեսզի հնարավոր լինի պատշաճ ձևով որոշել, թե արդյոք որակի որոշակի չափորոշիչ բավարարվել է, թե ոչ, այդ չափորոշիչը պետք է հստակ սահմանվի և վերաբերի որոշակի չափանիշների, որոնք հետագայում կարող են բաժանվել (առավել գործառական) ցուցիչների:

Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատում ուսանողների կողմից

Ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումը գործընթաց է, որի միջոցով ուսանողներն իրենց ներդրումն են ունենում պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանուր գործունեության և վերաբերմունքի գնահատման մեջ: Այս ուսումնասիրությունները թույլ են տալիս փորձագետներին որոշել համապատասխանությունը ուսանողների ակնկալիքների և դասախոսների իրական ուսումնական մոտեցումների միջև: Ուսանողների կողմից գնահատումը պետք է բացահայտի դասախոսի վերաբերմունքը լսարանում (մատչելի, զարգացած, հե-



տաքրքիր, զվարճացնող, համբերատար և այլն) և դասախոսի կարողությունները (բացատրելու, շահագրգռելու ուսանողներին, օգնելու ուսանողներին մտածել, ուղղելու ուսանողների սխալները ընկերական մոտեցմամբ, առաջարկելու արդյունավետ տեղեկատվություն և այլն):

Ուսանողների արդյունքների գնահատում

Ուսանողների արդյունքների գնահատումը գործընթաց է, որով հավաքվում, վերլուծվում և կիրառվում են ուսուցման և ուսումնառության արդյունքների և՛ քանակական, և՛ որակական փաստերը՝ նախասահմանված նպատակների և կրթական խնդիրների հետ դրանց համապատասխանությունը ստուգելու և իմաստալից հետադարձ կապ ապահովելու նպատակով, որն էլ կխթանի բարելավումը:

Ուսանողների հարցում

Ուսանողների հարցումը գնահատման մեթոդ է, որը կիրառում է հարցումներն ու հարցազրույցները ուսանողների գոհունակությունը կրթական ծրագրերից, ծառայություններից և իրենց կրթական փորձառության այլ բնագավառներից որոշելու համար:


Ուսանողներին խնդրում են պատասխանել մի շարք բաց, փակ հարցերի և մասնակցել հեռախոսային հարցումների: Ուսանողների հարցումը կարող է ներառել լսարանային, էլեկտրոնային, հեռախոսային հարցաշարեր, և հարցազրույցներ (ստանդարտացված, անհատական հարցազրույցներ, ֆոկուս-խմբային քննարկումներ):

Ուսանողների հարցումները համեմատաբար ոչ ծախսատար են: Դյուրին իրականացման առումով կարող են ներառել մասնակիցների սովորականով:

Նրանք առավելապես հարմար են համառոտ և ոչ զգայուն թեմաներ քննարկելու համար, հնարավորություն են ընձեռում ուսանողների տեսանկյունից արտահայտելու, թե ինչ է կատարվում տվյալ պահին համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունում: Որոշ հետազոտողներ կարող են հարցի տակ դնել դրանց վավերականությունը և հուսալիությունը, ինչպես նաև նրանց համապատասխանությունը կրթական/ակադեմիական քաղաքականությանը:

Առարկայական գնահատում

Առարկայական գնահատումը առանձնահատուկ կրթական բնագավառների կամ գործառույթների գնահատում է:




Որակի ամբողջական կառավարում

Որակի ամբողջական կառավարումը որակի կառավարման ազդեցիկ և համապարփակ մոտեցում է, որը շեշտը դնում է այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են շարունակական բարելավումը, կենտրոնացումը հաճախորդների պահանջների վրա, ռազմավարական կառավարումը, բարձրագույն կրթության որակը ապահովելու համար մատչելի համակարգերի կարիքը և առաջնորդության ու գերակայության մոտեցումը, ինչը շեշտում է աշխատողի իրավասությունները և պատվիրակումը:

Որակի կառավարման այսպիսի մոտեցումը շեշտադրում է գնահատման գործընթացը, որն իրականացվում է՝ ա) սահմանված նպատակների և չափորոշիչների միջոցով, որոնք սահմանվում են ներքին կարգով կամ արտաքին ֆինանսավորող մարմինների կողմից, բ) «հաճախորդներին» գոհացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների օգնությամբ, գ) փորձագետների և մասնագիտական եզրակացությունների միջոցով, դ) մրցակից կազմակերպությունների միջոցով: Որակի ամբողջական կառավարման և բենչմարքինգի մեթոդաբանության միջև տեսնում են բովանդակային և փիլիսոփայական կապ: Այսպիսի մոտեցումը առավելապես կիրառվել է տնտեսության բնագավառում՝ ավելի քիչ օգտագործվելով կրթական աշխարհում:

Մտուցում

Մտուցումը գործընթաց է, որի միջոցով որակի ապահովման գործակալության՝ գնահատման գործընթացների արդյունավետության և համապատասխանության մասին դատում են դրանց իրականացումից հետո:



ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

Օրենքներ

ԼՂՀ օրենքը «Կրթության մասին» / ընդունվել է 15.03.2000թ./

ԼՂՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» /ընդունվել է 25.05.2005/

ԼՂՀ օրենքը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» /ընդունվել է 27.09.2006/

ԼՂՀ օրենքը «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»/ընդունվել է 30.10.2002/

ԼՂՀ կառավարության որոշումներ

«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և ԼՂՀ Կառավարության 2003թ.հունիսի 16-ի թիվ 184 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշում /20 մայիսի 2008 թվականի N375-Ն/

«Արցախի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ԱՀ կառավարության որոշում / 5 դեկտեմբերի 2017 թվականի N 235-Ն/

«Արցախի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու և ԼՂՀ Կառավարության 2001թ. մարտի 6-ի N52 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության որոշում /5 դեկտեմբերի 2017 թվականի N 234-Ն/

«ԼՂՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշում / 6 մայիսի 2008 թվականի N 337-Ն/

«ԼՂՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ԼՂՀ կառավարության որոշում / 6 մայիսի 2008 թվականի N 338-Ն/

«ԼՂՀ-ում կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և ԼՂՀ կառավարության 2001 թվականի մարտի 6-ի N 52 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշում / 21 հունիսի 2011 թվականի N 410-Ն/:

Աշխատություններ

1.Որակի ապահովման չափորոշիչներ և ուղենիշներ բարձրագույն կրթության եվրոպական տարածքում (Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի զեկույց. բնագիրը անգլերեն 2005թ.)


2. Quality Assurance and Accreditation: A Glossary of Basic Terms and Definitions (2007),

UNESCO, Bucharest ISBN 92-9069-186-7 International Analytic Glossary of Issues Related to Quality in Higher Education [Prepared for the International Network of Quality Assurance Agencies in Higher Education (INQAAHE) and the EAIR Special Interest Group on Quality by Professor Lee Harvey, Centre for Research and Evaluation, Sheffield Hallam University, November 2004–December 2006.

www.qualityresearchinternational.com/glossary/

3. Glossary of Quality Assurance in Japanese Higher Education (2007), National Institution for Academic Degrees and University Evaluation

4. Senge, P. (1990), The fifth discipline: The art and practice of the learning organization. New York, N.Y.: Doubleday



**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՎ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԱրՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի առաքելությունը համալսարանում որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է:

2. Կենտրոնը գործում է Արցախի Հանրապետության օրենսդրության համապատասխան՝ ԱրՊՀ կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

3. Կենտրոնը սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է ԱրՊՀ կառուցվածքային այլ ստորաբաժանումների և արտահամալսարանական տարբեր կազմակերպությունների հետ՝ սահմանված կարգի համաձայն:

4. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

5. Կենտրոնը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

II. ԽՆԴԻՐՆԵՐՆ Ու ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ԱրՊՀ ՈԱ հայեցակարգի հիմքում ՈԱ համակարգի առաքելությունն է՝ նպաստել համալսարանի գործունեության հիմնական ոլորտներում (կրթություն, գիտություն և հանրային ծառայություններ) վստահության

⁴ Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 9-ի ««Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի 2014թ.օգոստոսի 28-ի N37-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»N34-Լ որոշմամբ հաստատված հավելված

ամրապնդմանն ու հավաստել, որ համալսարանի շնորհած որակավորումների որակն ու գործող չափորոշիչները պահպանվում, շարունակաբար բարելավվում և արդյունավետ կառավարվում են:

6. Կենտրոնի խնդիրներն են՝

1) ԱրՊՀ ՈԱ քաղաքականության և ռազմավարության մշակման գործընթացին մասնակցություն ու աջակցություն դրանց իրագործմանը.

2) որակի միասնական չափանիշների պահպանում, ՈԱ գործընթացների ներդաշնակեցում և իրականացում ԱրՊՀ գործունեության բոլոր հիմնական ոլորտներում.

3) կրթության որակի համար ԱրՊՀ հաշվետվողականության ապահովում ներքին (ուսանողներ, դասախոսական, վարչական կազմ, այլ աշխատողներ) և արտաքին (դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, կառավարություն, լիազոր մարմին) շահակիցների առջև.

4) կանոնակարգային և կազմակերպական հենքի ստեղծում ու վարչական օժանդակություն համալսարանի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման ու հավատարմագրման համար, որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապի ապահովում.

5) ազգային, տարածաշրջանային, միջազգային ՈԱ գործակալությունների ու համալսարանների ՈԱԿ-ների հետ կապերի հաստատում և ամրապնդում:


7. Կենտրոնի գործառույթներն են՝

1) վերահսկել ֆակուլտետներում կրթական ծրագրերի պլանավորման, մշակման, փոփոխման ու դրանց ՈԱ գործընթացների իրականացումը և համալսարանում իրականացվող ծրագրերի՝ մեթոդական, տեխնիկական ու մարդկային ռեսուրսներով պատշաճ ապահովվածությունը.

2) մասնակցել համալսարանի ՈԱ քաղաքականության, գործիքակազմի, գործընթացների մշակման աշխատանքներին.

3) պատասխանատվություն կրել ֆակուլտետներում ուսման ՈԱ ու ներքին վերահսկման, ինչպես նաև համալսարանի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար.

4) կազմակերպել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացն ու մասնագիտական վերապատրաստումը և կազմակերպել պրոֆեսորադասախոսական կազմի, ուսումնական գործ-



ընթացին օժանդակող ստորաբաժանումների աշխատակիցների ատեստավորումը.

5) համապատասխան համակարգչային ծրագրերի միջոցով վերահսկողություն իրականացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության և գրագողության նկատմամբ.

6) հաստատել համալսարանական դասալսումների ժամանակացույցը, գործընթացի համակարգումը և իրականացումը.

7) իրականացնել, դիտարկել և մշտապես բարելավել որակի ներքին ապահովման գործընթացները, սահմանել որակի ներքին չափանիշները և չափորոշիչները՝ ԱՀ օրենսդրության համաձայն և եվրոպական պահանջներին համահունչ.

8) մշակել ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը.

9) համակարգել, վերահսկել և աջակցել բոլոր ստորաբաժանումներում կրթության ՈԱ գործընթացների իրականացմանը.

10) ապահովել ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության, դրանցում ուսանողների, շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը.

11) կազմակերպել ԱրՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթացը, համապատասխան զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը.

12) համագործակցել ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հետ և համակարգել համալսարանի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ.

13) մշակել կրթական ծրագրերը, պատրաստել ՈԱ ընթացակարգերը ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման համար, համակարգել և ԱրՊՀ բոլոր ստորաբաժանումներում աջակցել դրանց իրականացմանը և ապահովել կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը, ստուգել դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին.

14) կազմակերպել կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան, ստուգել նոր և վերանայված կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթները.

15) համակարգել կրթական ծրագրերի որակի ինքնագնահատման գործընթացն ու դրանց արտաքին գնահատումը և օժանդակել հավատարմագրման գործընթացներին.

16) մշակել և իրականացնել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքակազմը (հարցումներ, հետազոտություններ և այլն) և ընթացակարգերը.

17) համագործակցել ԱրՊՀ գիտական խորհրդի ՈԱ մշտական հանձնաժողովի հետ և աջակցել նրա աշխատանքներին.

18) կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել գիտական խորհրդին.

19) սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցել ԱրՊՀ կառուցվածքային այլ ստորաբաժանումների և արտահամալսարանական տարբեր կազմակերպությունների հետ՝ սահմանված կարգի համաձայն:

III. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8. Կենտրոնը ղեկավարում է Կենտրոնի վարիչը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ԱրՊՀ ռեկտորը:

9. ՈԱ կենտրոնի վարիչի հետ ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագիր, որը հիմք է նրա հրամանագրման համար:

10. Կենտրոնի աշխատակազմն է՝

1) Կենտրոնի վարիչ (ծածկագիր՝ 14.1).

2) մեթոդիստ (ծածկագիր՝ 14.2).

3) մեթոդիստ (ծածկագիր՝ 14.3).

4) մասնագետ (ծածկագիր՝ 14.4).

11. Կենտրոնի վարիչը իրականացնում է Կենտրոնի աշխատանքների կոորդինացում և վերահսկում, Կենտրոնի գործունեությանը առնչվող վերլուծություններ:

12. Կենտրոնի վարիչը պատասխանատվություն է կրում Կենտրոնում իրականացվող աշխատանքների ՈԱ, խնդիրների լուծման և գործառնությունների կատարման համար:

13. Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ԱրՊՀ ռեկտորը:

IV. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Կենտրոնի վարիչը՝

1) ունի բարձրագույն կրթություն, առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ բարձրագույն կրթության ոլորտում.

2) ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) ունի համակարգչով (Microsoft Word, Microsoft Excel և այլ ծրագրեր) և ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն.

5) տիրապետում է հայերենին ու ռուսերենին (ազատ) և անգլերենին (կարդում և թարգմանում է բառարանով).

6) տիրապետում է անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների:

15. Կենտրոնի մեթոդիստը՝

1) ունի բարձրագույն կրթություն, առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ.

2) ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) ունի համակարգչով (Microsoft Word, Microsoft Excel և այլ ծրագրեր) և ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն.

5) տիրապետում է հայերենին ու ռուսերենին (ազատ) և անգլերենին (կարդում ու թարգմանում է բառարանով):

16. Կենտրոնի մեթոդիստը՝

1) ունի բարձրագույն կրթություն. աշխատանքային փորձը ցանկալի է.

2) ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) ունի համակարգչով (Microsoft Word, Microsoft Excel և այլ ծրագրեր) և ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն:

5) տիրապետում է հայերենին ու ռուսերենին (ազատ) և անգլերենին (կարդում ու թարգմանում է բառարանով):

17. Կենտրոնի մասնագետը՝

1) ունի բարձրագույն կրթություն, աշխատանքային փորձը ցանկալի է:

2) ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը:

4) ունի համակարգչով (Microsoft Word, Microsoft Excel և այլ ծրագրեր) և ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն:

5) տիրապետում է հայերենին ու ռուսերենին (ազատ) և անգլերենին (կարդում ու թարգմանում է բառարանով):

V. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՅՈՒՆԸ

18. Կենտրոնի վարիչն անմիջականորեն ենթակա և հաշվետու է ռեկտորին, իսկ Կենտրոնի աշխատողները՝ Կենտրոնի վարիչին:

19. Կենտրոնի վարիչի բացակայության դեպքում նրան փոխարինում է մեթոդիստներից մեկը (ծածկագիր՝ 14.2), որի բացակայության դեպքում՝ մյուսը (ծածկագիր՝ 14.3):

20. Կենտրոնի աշխատողները Կենտրոնի վարիչի հանձնարարությամբ մասնակցում են Կենտրոնի աշխատանքների ծրագրմանը և կատարում նրա հանձնարարականները:

21. Կենտրոնի աշխատողները պատասխանատվություն են կրում օրենքների, իրավական այլ ակտերի պահանջները և իրենց վերապահված լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

VI. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Կենտրոնի աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ԱրՊՀ ներքին կարգապահական կանոններով և սույն կանոնադրությամբ:

23. Կենտրոնի վարիչը՝

1) կազմակերպում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը.

2) ԱրՊՀ ռեկտորատում և գլխական խորհրդում հանդես է գալիս համապատասխան հաշվետվություններով, զեկույցներով և հաղորդումներով.

3) ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում այլ ստորաբաժանումների հետ Կենտրոնի փոխգործակցությունը.

4) ստորագրում է Կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը, կատարում նշագրումներ, իր լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ գրություններ ու փաստաթղթեր.

5) Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված՝ կարող է հրավիրել խորհրդակցություններ, Կենտրոնի գործունեությանն առնչվող ԱրՊՀ համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքների վերաբերյալ.

6) ԱրՊՀ ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ Կենտրոնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, ատեստավորելու և վերապատրաստելու վերաբերյալ.

7) ներկայացնում է Կենտրոնը արտաքին շփումներում, աշխատանքները կազմակերպելու նպատակով հանդիպում տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, նախապատրաստում և ստորագրում համապատասխան համագործակցությանն առնչվող փաստաթղթեր՝ դրանց մասին պարբերաբար զեկույցելով և համաձայնեցնելով ԱրՊՀ ռեկտորի հետ.

8) մշակում է որակի ներքին ապահովման ընթացակարգերը կրթական ծրագրերի հաստատման, ընթացիկ մշտադիտարկման և պարբերաբար վերանայման համար, հետևում և աջակցում է դրանց իրականացմանը համալսարանի ստորաբաժանումներում.

9) համակարգում է համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատումը և վերլուծությունը.

10) պատասխանատու է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգման և իրականացման ու չափման գործիքակազմի մշակման համար.

11) գնահատում է դասախոսական կազմի ուսումնամեթոդական գործունեությունը և դրա արդյունավետությունը.

12) երաշխավորում է բուհում իրականացվող կրթության համապատասխանությունը սահմանված ուղենիշներին, չափանիշներին և չափորոշիչներին ու կրթության որակի վերաբերյալ հրապարակային, ճշգրիտ տեղեկատվության հասանելիությանը.

13) աջակցում է կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավմանը՝ համագործակցելով արտաքին և ներքին շահակիցների հետ.

14) նպաստում է ՈԱ գործընթացներում ուսանողների ներգրավվածության և իրազեկության աստիճանի բարձրացմանը.

15) համակարգում է կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացը և աջակցում դրանց իրականացմանը՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան.

16) կազմակերպում և վերահսկում է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացն ու պրոֆեսորադասախոսական կազմի, ուսումնական գործընթացին օժանդակող ստորաբաժանումների աշխատակիցների ատեստավորումը.

17) վերահսկում և ամփոփում է ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյահոգեբանական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կազմակերպման և արդյունքների տվյալների բազայի ստեղծման գործընթացը.

18) իրականացնում է ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության և գրագողության նկատմամբ վերահսկողություն.

19) հաստատում է համալսարանական դասալսումների ժամանակացույցը.

20) կազմակերպում և հսկում է Կենտրոնում տարվող գործավարությունը, ինչպես նաև կատարում Կենտրոնի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ.

21) ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում այլ ստորաբաժանումների հետ Կենտրոնի փոխգործակցությունը.

22) ըստ անհրաժեշտության՝ ԱրՊՀ ռեկտորին ներկայացնում է համապատասխան զեկույց և առաջարկություններ Կենտրոնի գործունեության վերաբերյալ.

23) իրականացնում է համալսարանի ռեկտորի հրամաններով և ԱՀ օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

24) համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ կատարում է այլ գործառույթներ:

24. Կենտրոնի մեթոդիստը՝

1) մասնակցում է ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյահոգեբանական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կազմակերպմանը և արդյունքները մուտքագրում տվյալների բազա.

2) կատարում է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման ծրագրի իրականացման աշխատանքներ.

3) ընդունում և գրանցում է հայտեր պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման ծրագրի կազմակերպման համար.

4) մասնակցում է ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնական գործընթացին օժանդակող ստորաբաժանումների աշխատակիցների ատեստավորման գործընթացին.

5) իրականացնում է համալսարանական կրթության ՈԱ առնչվող գործառույթներ.

6) մասնակցում է կրթական ծրագրերի մշակման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացին.

7) մասնակցում է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգմանը և իրականացմանը.

8) մասնակցում է ՈԱ գործընթացների իրականացման և բարելավման աշխատանքներին, դրանց արդյունքների մասին զեկուցում Կենտրոնի վարիչին.

9) աջակցում է կրթության ՈԱ գործընթացների իրականացմանը և համակարգմանը.

10) մասնակցում է ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային փաստաթղթերի մշակման աշխատանքներին.

11) աջակցում է ՈԱ գործընթացներում ուսանողների ներգրավվածության և իրազեկության աստիճանի բարձրացմանը.

12) կատարում է Կենտրոնի վարիչի այլ հանձնարարականներ:

25. Կենտրոնի մեթոդիստը՝

1) մասնակցում է ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյահոգեբանական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կազմակերպմանը և արդյունքները մուտքագրում տվյալների բազա.

2) կատարում է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման ծրագրի իրականացման աշխատանքներ.

3) ընդունում և գրանցում է հայտեր պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման ծրագրի կազմակերպման համար.


4) մասնակցում է ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսումնական գործընթացին օժանդակող ստորաբաժանումների աշխատակիցների ատեստավորման գործընթացին.

5) մասնակցում է ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների և գրագոյության նկատմամբ վերահսկողության իրականացման աշխատանքներին.

6) մասնակցում է կրթական ծրագրերի մշակման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացին համալսարանի ստորաբաժանումներում.

7) մասնակցում է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգմանը և իրականացմանը.

8) իրականացնում է համալսարանական կրթության ՈԱ առնչվող գործառույթներ.



9) մասնակցում է ՈԱ գործընթացների իրականացման, համակարգման և բարելավման աշխատանքներին, դրանց արդյունքների մասին զեկուցում Կենտրոնի վարիչին.

10) մասնակցում է ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային փաստաթղթերի մշակման աշխատանքներին.

11) աջակցում է ՈԱ գործընթացներում ուսանողների ներգրավվածության և իրազեկության աստիճանի բարձրացմանը.

12) կատարում է Կենտրոնի վարիչի այլ հանձնարարականներ:

26. Կենտրոնի մասնագետը՝

1) մասնակցում է ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյահոգեբանական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կազմակերպման և արդյունքների ամփոփման աշխատանքներին.

2) մասնակցում է ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսումնական գործընթացին օժանդակող ստորաբաժանումների աշխատակիցների ատեստավորման գործընթացին.

3) իրականացնում է համալսարանական կրթության ՈԱ առնչվող գործառույթներ.

4) մասնակցում է ՈԱ գործընթացների իրականացման և բարելավման աշխատանքներին, դրանց արդյունքների մասին զեկուցում Կենտրոնի վարիչին.

5) մասնակցում է ընթացակարգերի, կրթական ծրագրերի մշակման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացին.


6) մասնակցում է ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային փաստաթղթերի մշակման աշխատանքներին.

7) մասնակցում է կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավմանը՝ համագործակցելով արտաքին և ներքին շահակիցների հետ.

8) աջակցում է ՈԱ գործընթացներում ուսանողների ներգրավվածության և իրազեկության աստիճանի բարձրացմանը.

9) աջակցում է կրթության ՈԱ գործընթացների իրականացմանը և համակարգմանը.

10) կատարում է Կենտրոնի վարիչի այլ հանձնարարականներ:



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ⁵**

ՄԱ- ԿԱՐ- ՂԱԿ	ՈՐԱ- ԿԱ- ՎՈ- ՐՈՒՄ	ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ/ ԾՐԱԳԻՐ	ԲՆՈՒԹԱԳՐԻԶՆԵՐ		
			ԳԻՏԵԼԻՔՆԵՐ	ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԱՐՈՂՈՒԱ- ԿՈՒԹՅՈՒՆ (ԿՈՄՊԵՏԵՆ- ՑԻԱ)
1-ին	ՏԱՐՐԱ- ԿԱՆ ԿՐԹՈՒ- ԹՅԱՆ ՎԿԱՑԱ- ԿԱՆ	Միջնա- կարգ կրթության 1-ին աստիճան՝ տար- րական կրթություն Տևողու- թյունը՝ 4 տարի	• Տարրական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են մայրենի լեզվով գրելու, կարդալու, խոսելու և թվաբանական գործողություններ կատարելու համար: • Տարրական գիտելիքներ բնության, հասարակության, արվեստի և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ: • Օտար լեզվով սահմանափակ բառապաշարի և արտահայտությունների իմացություն՝ իր անձը և պարզ առօրյա իրադրությունները նկարագրելու համար:	Տարրական հմտություններ, որոնք անհրաժեշտ են պարզ առաջադրանքներ և գործողություններ կատարելու համար՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով պարզագույն կանոններ, գործիքներ, չափիչ ու այլ սարքեր և տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (այսուհետ՝ ՏՀՏ):	• Գործել և սովորել անմիջական վերահսկողության ներքո՝ ծանոթ ու հստակ սահմանված պայմաններում, և ներկայացնել կատարած աշխատանքը:
2-րդ	ՀԻՄՆ- ԱԿԱՆ ԿՐԹՈՒ- ԹՅԱՆ ՎԿԱ- ՑԱԿԱՆ	Միջնա- կարգ կրթության 2-րդ աստիճան՝ միջին դպրոց Տևողու- թյունը՝ 5 տարի	Բազային գիտելիքներ մայրենի ու օտար լեզուներից, ՏՀՏ-ից, մաթեմատիկայից, ինչպես նաև բնագիտական, հասարակագիտական, արվեստի, սպորտի, անվտանգ կենսագործունեության բնագավառների առարկաներից՝ հետագա ուսումնառության կամ մասնագիտական պատրաստ-	Իմացական, ճանաչողական, հաղորդակցման և գործնական բնույթի որոշակի հմտություններ, որոնք նպատակաուղղված են՝ 1) հանձնարարված առաջադրանքների կատարմանը և առօրյա խնդիրների լուծմանը՝ պարզ կանոնների, մեթոդների գործիքների և սարքերի կիրառման միջոցով, 2) անհրաժեշտ տեղեկատվության որոնմանը, հավաքագրմանը և պահպանմանը անհրաժեշտության դեպքում կիրառելով ՏՀՏ, 3) օտար լեզվով ամենօրյա կիրառություն ունեցող արտահայտությունների ընկալմանը և գործածությանը:	• Գործել և սովորել վերահսկողության ներքո՝ ծանոթ և հստակ սահմանված պայմաններում, որոշ աստիճանի ինքնուրույնության և պատասխանատվության դրսևորմամբ:

⁵ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» N944-Ն որոշմամբ հաստատված հավելված 4


			վածություն չպահանջող աշխատանք կատարելու համար:		● Հասկանալ բնության, Հասարակական և առօրյա կյանքի տարբեր երևույթները և կատարել դատողություններ դրանց վերաբերյալ: ● Տիրապետել Հասարակական համակեցության կանոններին և դրսևորել քաղաքացիական գիտակցության տարրեր: ● Դրսևորել ազգային և համամարդկային մշակութային արժեքների ընդհանուր իմացություն:
3-րդ	ԱՐՀԵՍՏԱՎՈՐ (Հիմնական կրթության) (Վարպետային ուսուցման որակավորման վկայական)	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր Տեղադրությունը՝ 6 ամսից 1 տարի	● Բազային գիտելիքներ մայրենի ու օտար լեզուներից, ՏՀՏ-ից, մաթեմատիկայից, ինչպես նաև հասարակագիտական, բնագիտական, արվեստի, սպորտի, անվտանգ կենսագործունեության բնագավառներից որոշակի ոլորտում պարզ աշխատանք կատարելու կամ հետագա ուսումնառության համար: ● Ընդհանուր հասկացությունների, սկզբունքների և մեթոդների իմացություն, որոնք բավարար են պարզ մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:	● Իմացական, ճանաչողական, հաղորդակցման և գործնական բնույթի բազային հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) որոշակի մասնագիտական խնդիրների լուծման և առաջադրանքների կատարման համար՝ համապատասխան կանոնների, մեթոդների, սարքերի և գործիքների ընտրության ու կիրառման միջոցով, 2) անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման և օգտագործման համար՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով ՏՀՏ, 3) օտար լեզվով ամենօրյա կիրառություն ունեցող արտահայտությունների գործածության համար: ● Ուսումնառության արդյունքում ձեռք բերած գիտելիքները և իմացությունն աշխատանքում կիրառելու պարզ մասնագիտական հմտություններ:	● Աշխատանքի և ուսումնառության ընթացքում ցուցաբերել խնդրություն և ստանձնել առաջադրանքների կատարման արդյունքների հանդեպ անձնական պատասխանատվություն: ● Հարմարեցնել սեփական վարքագիծը խնդիրների լուծման ընթացքում ի հայտ եկող հանգամանքներին: ● Բացատրել ու կատարել եզրահանգումներ բնության,

					հասարակության և առօրյա կյանքի տարբեր երևույթների ու օրինաչափությունների վերաբերյալ: ● Տիրապետել Հասարակական համակեցության կանոններին և դրսևորել քաղաքացիական գիտակցություն: ● Կարևորել ազգային և համամարդկային մշակութային արժեքները:
4-րդ	1. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏՍ 2. ԱՐՀԵՍՏԱՎՈՐ (Միջնակարգ կրթությամբ) (Արհեստագործական կրթության դիպլոմ)	Միջնակարգ կրթության 3-րդ աստիճան՝ ավագ դպրոց Տևողությունը՝ 3 տարի Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր Տևողությունը՝ 1-ից 3 տարի	● Փաստական և տեսական հիմնարար գիտելիքներ միջնակարգ կրթության բոլոր բնագավառներից՝ հետագա աշխատանքի կամ ուսումնառության համատեքստում: ● Աշխատանքի բնագավառի առնչվող բնօրինակ հասկացություններին, սկզբունքների և մեթոդների իմացություն, որոնք պահանջվում են հետագա մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:	● Տարաբնույթ իմացական, ճանաչողական, հաղորդակցման և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են. 1) աշխատանքի կամ հետագա ուսումնառության որևէ բնագավառում կոնկրետ խնդիրներ լուծելու, առաջադրանքներ և ուսումնասիրություններ կատարելու, ինչպես նաև գործածված մեթոդներն ու ձեռք բերված արդյունքները վերլուծելու և ամփոփելու համար. 2) տեղեկատվության հավաքագրման, համադրման դասակարգման, և օգտագործման համար՝ կիրառելով S2S. 3) օտար լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցվելու համար: ● Ուսումնառության արդյունքում ձեռք բերած գիտելիքները և իմացությունը աշխատանքում կիրառելու մասնագիտական հմտություններ:	● Բնքնուրույն կազմակերպել և կառավարել սեփական աշխատանքային կամ ուսումնառության գործընթացները կանխատեսելի, բայց փոփոխունակ միջավայրում և ստանձնել դրանց գնահատման ու բարելավման որոշ պատասխանատվություն: ● Հստակ ուղղորդման ներքո բացահայտել սեփական կրթական պահանջմունքները՝ ուսումնառությունը շարունակելու համար: ● Կազմակերպել այլ անձանց առօրյա գործողու-

					թյունները: ● Կատարել բնության, հասարակության և առօրյա կյանքի տարաբնույթ երևույթների վերլուծություններ՝ կիրառելով հիմնավորման և ապացուցման մեթոդներ: ● Պահպանել հասարակական համակեցության կանոնները և դրսևորել քաղաքացիական գիտակցությամբ վարքագիծ: ● Արժևորել և գնահատել ազգային և համամարդկային արժեքները:
5-րդ	ՄԱՍ-ՆԱԳԵՏ (Միջին մասնագիտական կրթության դիպլոմ)	Միջին մասնագիտական կրթական ծրագիր Տևողությունը՝ 2-ից 5 տարի	● Հիմնարար և համակողմանի փաստական, տեսական և մասնագիտացված գիտելիքներ աշխատանքի կամ ուսումնառության ոլորտից: ● Մասնագիտության հիմնարար Հասկացությունների, տեսությունների և մեթոդների իմացություն:	● Բազմակողմանի և համապարփակ իմացական, ճանաչողական, վերլուծական և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են. 1) տարաբնույթ, այդ թվում՝ մասնագիտական խնդիրները բացահայտելու համար. 2) առաջացած խնդիրների վերաբերյալ դատողություններ կատարելու և լուծումներ առաջադրելու համար՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում: ● Հաղորդակցման և ՏՀՏ հմտություններ, որոնք անհրաժեշտ են. 1) մասնագիտությանն առնչվող տեղեկատվությունը, գաղափարները, հասկացությունները, խնդիրներն ու դրանց լուծումները բացատրելու և հանրության նեղ շրջանակներում ներկայացնելու համար. 2) մասնագիտական ոլորտում աշխատանքը դյուրացնելու և արագացնելու համար. 3) մասնագիտությանն առնչվող քանակական և որակական տվյալները հավաքագրելու, մշակելու և վերլուծելու համար:	● Որոշ չափով կառավարել և վերահսկել աշխատանքային կամ ուսումնառության գործընթացներ՝ անկանխատեսելի ու փոփոխունակ միջավայրում, ստանձնել սեփական ու այլ անձանց գործողություններից հետևելու և դրանք բարելավելու պատասխանատվություն: ● Բացահայտել սեփական կրթական պահանջմունքները և կայացնել որոշում հե-

					տագա ուսումնառության վերաբերյալ: • Պահպանել հասարակական համակեցության կանոնները, կենսական տարբեր իրավիճակներում դրսևորել քաղաքացիական գիտակցություն՝ վարքագիծ, ինչպես նաև իրականացնել որոշակի վերահսկողություն թիմում այդ կանոնների պահպանման նկատմամբ: • Կիրառել ազգային և համամարդկային արժեքները առօրյա հարաբերություններում:		
ՄԱՎԱՐԴԱԿ	ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ	ԿՐԹԱԿԱՆ ՄՐԱԳԻՐ	ԳԻՏԵԼԻՔՆԵՐ	ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ			ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ)
				Գիտելիքի կիրառման հմտություններ	Հաղորդակցման, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) և տվյալների հետ աշխատելու հմտություններ	Ընդհանրական իմացական հմտություններ	Ինքնուրույնություն և պատասխանատվություն
6-րդ	ԲԱԿԱՆԱԿՐԱԿ (Բակալավրի դիպլոմ)	Բակալավրի կրթական ծրագիր Տեղադրու-	Մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ոլորտի արդի և հիմնարար հասկացություններ	Հմտություններ, որոնք ցուցաբերում են նորարարական ու առաջադեմ	• Տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվությունը,	• Վերլուծելու և եզրահանգումներ կատարելու Հմտություններ՝ դրսևորելու	• Ծավալել լիարժեք մասնագիտական գործունեություն:


		թյունը՝ առնվազն 3 տարի (Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգ, այսուհետ՝ ԿՓԿՀ) (180-240 ԿՓԿՀ)	ների, տեսությունների ու մեթոդների իմացություն և առաջադեմ գիտելիքներ:	մոտեցումներ և անհրաժեշտ են ձեռք բերած գիտելիքը և իմացությունը մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում ծագած անկանխատեսելի խնդիրները լուծելիս:	փաստարկները, զաղափարները, խնդիրները և դրանց լուծումները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացատրելու հմտություններ: ● Մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու և աշխատանքը դյուրացնելու համար S2S-ներ կիրառելու հմտություններ: ● Մասնագիտական ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտու-	լով քննադատական մտածողություն: ● Հմտություններ, որոնք պահանջում են ստեղծագործական մոտեցում ոլորտի մասնագիտական խնդիրները բացահայտելիս և տարբեր լուծումներ առաջադրելիս:	● Կառավարել մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր անկանխատեսելի աշխատանքային կամ ուսումնական միջավայրում, ստանձնել պատասխանատվություն առանձին անհատների կամ թիմի մասնագիտական զարգացման համար: ● Որոշել հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները՝ ելնելով սեփական պահանջմունքներից: ● Գիտակցել անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինել ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
--	--	---	---	---	--	--	--



					թյուններ՝ հիմնա- վորված դատո- ղություն- ներ անելու համար:		
7-րդ	ՄԱ- ԳԻՍՏ- ԲՈՍ (Մա-գիստ- րոսի դիպլոմ) ԴԻՊԼՈ- ՄԱ- ՎՈՐ- ՎԱՍԻ ՄԱՍՆԱ- ԳԵՏ (Դիպլոմ-ա- վորված մասնա- գետի դիպլոմ)	Մագիս- տրոսի կրթական ծրագիր Տնտղու- թյունը՝ առնվազն 1 տարի (60-120 ԿՓԿՀ) Դիպլո- մավոր- ված մասնա- գետի կրթական ծրագիր Տնտղու- թյունը՝ առնվազն 5 տարի	• Խորը մասնագի- տացված գիտելիք- ներ՝ այդ թվում տվյալ ոլորտի վերջին ձեռքբե- րումների վերաբեր- յալ, որոնք կիրառ- վում են ուսումնա- ռության, հետազո- տության և աշխա- տանքի ընթացքում: • Տվյալ մասնա- գիտական բնագա- վառի և միջմաս- նագիտական ոլորտների տեսությունների, առաջավոր սկզբունքների ու մեթոդների իմացություն:	Առանցքային մասնագի- տական հմտություն- ներ, որոնք անհրաժեշտ են. • հետազո- տական ու նորարական գործունեու- թյուն իրակա- նացնելիս տարբեր ոլորտների գիտելիքը համակցելու և նոր գիտելիք ստեղծելու համար, • նոր և ան- ժանոթ իրա- դրություն-նե- րում տեսա- կան ու գործ- նական խնդիրներ լուծելու համար:	• Մաս- նագիտա- կան և ոչ մասնա- գիտա- կան լայն հանրու- թյանն իր երա- հանգում- ները, հաճա- կա- տասխան հիմնա- վորում- ները և հետա- զոտու- թյան արդյունք ները հստակ ու համա- կարգված ներկա- յացնելու և բա- ցատրելու հմտու- թյուններ: • Մաս- նագիտա- կան և/կամ միջմասն ագի- տական ոլորտ- ներում բարդ խնդիր- ներ լուծելիս և հետա- զոտու- թյուններ կատարե- լիս ՏՀՏ-ները վարժ կիրառե- լու	Հմտություններ, որոնք անհրա- ժեշտ են մասնա- գիտական ոլորտի հիմնա- խնդիրները հետազոտելու, արդիական գաղափարներ ու մոտեցումներ առաջադրելու, ինչպես նաև ոլորտի գիտելիքի և պրակտիկայի ընդլայնմանը միտված նորա- րարական ու ստեղծագոր- ծական լուծում- ներ առաջարկե- լու համար:	• Մասնագի- տական կամ ուսումնառու- թյան ոլորտում ծավալել գործունեու- թյուն, որը պահանջում է բարդ և ան- ժանոթ աշխա- տանքային իրադրություն- ների կառա- վարման ու վերափոխման ռազմավարա- կան նոր մոտեցումներ: • Նպաստել մասնագիտակ- ան գիտելիքի զարգացմանը: • Ստանձնել թիմի ռազմա- վարական նպատակների իրագործումը վերահսկելու պատասխա- նատվություն: • Գնահատել իր շարունա- կական կրթության ու մասնագի- տական զար- գացման կարիքները՝ արդի տեխնոլո- գիական զար- գացումների համատեքս- տում, ունակ լինել շարունա- կելու ուսումնա- ռությունը արագ փոփոխ- վող միջավայ- րերում:

					հմտություններ: ● Հմտություններ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական/կամ միջմասնագիտական ոլորտներին առնչվող քանակական ու որակական տվյալները խորը վերլուծելու և գնահատելու համար՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:	● Նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը: ● Գործել՝ զուգակցելով հայոց ազգային արժեհամակարգն ու պատմամշակութային փորձը համամարդկային արժեքների հետ:	
8-րդ	ԳԻՏՈՒՆԵՐԻ ԹԵԿՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒՆԵՐԻ թեկնածուի վկայական)	Հետազոտական մասնագիտական կրթական ծրագիր Տեղեկատվության առնչված 3 տարի (180 ԿՓԿՀ)	● Առավել առաջադեմ (առաջանցիկ) գիտելիքներ մասնագիտական բնագավառից և միջմասնագիտական ոլորտներից, որոնք կիրառվում են ուսումնառության, գիտական հետազոտությունների և աշխատանքի ընթացքում:	Առաջադեմ մասնագիտական հմտություններ՝ ներառյալ սինթեզ և գնահատում, որոնք անհրաժեշտ են. ● ձեռք բերած գիտելիքը և բնագավառի	● Տեսական ու գործնական, բարդ և համալիր խնդիրներ, հետազոտության արդյունքներ	Հմտություններ, որոնք անհրաժեշտ են. 1) բարդ և վերացական գաղափարներ առաջադրելու, 2) առկա տեղեկատվությունն ու հիմնախնդիրները ներկայացնելու	● Գիտակրթական և մասնագիտական առաջատար ոլորտներում նախաձեռնել և ղեկավարել համալիր նորարարական գործընթացներ՝ դրսևորելով գիտական և մասնագիտա-

			● Մասնագիտական բնագավառի և միջմասնագիտական ոլորտների նորագույն տեսությունների, մոտեցումների, վարկածների և գիտահետազոտական մեթոդների համընդգրկուն և խոր իմացություն:	հայեցակարգային սկզբունքների և մեթոդների իմացությունը բարդ տեսական և խնդիրներ լուծելիս, ● նորարարական գիտական հետազոտություններ պլանավորելիս և իրականացնելիս:	գիտական շրջանակներին և լայն հանրությանը ներկայացնելու և դրանք մեկնաբանելու զարգացած հմտություններ: ● Գիտական հետազոտություն կատարելիս և նոր գիտելիք ստեղծելիս S2S-ները համակողմանի կիրառելու հմտություններ: ● Փոխկապակցված տարբեր ոլորտներից ստացած մեծածավալ քանակական և որակական տվյալները գնահատելու և օգտագործելու հմտություններ բարդ և	և դրանց վերաբերյալ նոր և ինքնատիպ մեկնաբանություններ անելու համար՝ հիմնվելով գիտական հետազոտության արդյունքների վրա: ● Հմտություններ, որոնք անհրաժեշտ են. 1) ինքնատիպ հետազոտություն պլանավորելու և իրականացնելու համար, 2) այնպիսի արդյունքներ ստանալու համար, որոնք, հանդիսանալով ներդրում գիտության և/կամ մասնագիտական գործունեության ոլորտում, տպագրվում են ազգային և միջազգային գրախոսվող հրատարակություններում, 3) հետազոտության արդյունքները տեսության վերածելու համար:	կան բարեխղճություն, անկախություն և ինքնուրույնություն: ● Ղեկավարել հետազոտական կամ մասնագիտական թիմ՝ դրսևորելով բավարարագողեցություն և հանձնառության պատրաստակամություն: ● Գործել ի նպաստ ազգի և պետության հարատև զարգացման՝ պահպանելով ու պաշտպանելով ազգային և համամարդկային արժեքները:
--	--	--	--	--	--	---	--



					համալիր զաղափա րներ առա- ջադրելու և նոր գիտելիք ստեղծե- լու համար:		
--	--	--	--	--	---	--	--

(Հավելվածը խմբ. 02.12.2016 N 774-Ն)


ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ⁶

1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՀՀ	Չափանիշը	Չափորոշիչները
1.	Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ԱՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ՝ ՈԱՇ):	ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին, բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
2.	ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառ-	ա. հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց


⁶ Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 5-ի «Արցախի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 235-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1

	նումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:	և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը, գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման ու մշտադիտարկման հստակ մեխանիզմներ, դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա, ե. քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում), զ. ՄՈՒՀ-ում գործում են ՄԿԾ-ի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ, է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմաց-
--	--	--

		ված, օրյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:
--	--	---

3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ


	Չափանիշը	Չափորոշիչները
3.	Մասնագիտական կրթական ծրագրերը (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը ու միջազգայնացմանը:	ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների, բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը, գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը, դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավան-



		դողների շարժունությանը, միջազգայնացմանը, ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:
--	--	---

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ


	Չափանիշը	Չափորոշիչները
4.	ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:	ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր, գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար, դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսա-



		նողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում, է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման ու որակի ապահովման մեխանիզմներ:
--	--	---

5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԾՄԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ


	Չափանիշը	Չափորոշիչները
5.	ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորա-	ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրո-



	դասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:	Ֆետրադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար, դ. պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը, զ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:
--	--	---

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ


	Չափանիշը	Չափորոշիչները
6.	ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրա-	ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն




	կանացումը և կապն ուսումնառության հետ:	արտահայտող ռազմավարություն, բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները, գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով, դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:
--	---------------------------------------	---

7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
7.	ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:	ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, բ. ՄՈՒՀ-ն իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար,



	գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը, ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ, զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին, է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
--	---




8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
8.	ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:	ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ, բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
9.	Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:	ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր, բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց, գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ, դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:



10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

	Չափանիշը	Չափորոշիչը
10.	ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:	ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, բ. որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, գ. ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, դ. որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է, ե. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար, զ. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ⁷

1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԸ


ՀՀ	Չափանիշը	Չափորոշիչները
1.	Մասնագիտությունների կրթական ծրագրերն (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ԱՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշիչի պահանջներին, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած առաքելությանը:	ա. ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին, բ. ՄԿԾ-ն հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս, գ. ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների, դ. ՄԿԾ-ն համապատասխանում է որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ՝ ՈԱՇ), մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշիչին, ե. ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է և համահունչ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրի հետ ու նպաստում է ուսանողների և դասախոսական կազմի

⁷ Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 5-ի «Արցախի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 235-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2

		շարժունությանն ու միջազգայնացմանը, զ. ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները, է. առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը:
--	--	---

2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

	Չափանիշը	Չափորոշիչները
2.	ՄԿԾ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար:	ա. ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ ու դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր, բ. ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել է դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վեր-




		հանմանն ու զարգացմանը, գ. ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին, դ. հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը:
--	--	--

3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
3.	ՄԿԾ-ի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:	ա. ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար, բ. ՄԿԾ-ն իրականացվում է՝ հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները, գ. առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ


	Չափանիշը	Չափորոշիչները
4.	ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, որը թույլ է տալիս	ա. ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսա-



հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը:	նողներին, բ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ, գ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ, դ. ՄԿԾ-ի շրջանակներում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները, ե. ՄԿԾ-ի շրջանակներում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:
--	--

5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ


	Չափանիշը	Չափորոշիչները
5.	ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև:	ա. ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները, բ. ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների



		զարգացմանն ու նորարարություններին, գ. ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, դ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ:
--	--	--

6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
6.	ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր:	ա. ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը, բ. ուսանողներին տրամադրվում են ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն, գ. ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:



7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
7.	ՄԿԾ-ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և շարունակական զարգացումը:	ա. որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակության կարիքներին և ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար, բ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր), գ. ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների բարելավման համար, դ. ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում, ե. ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

1. ԱրՊՀ հետադարձ կապի մեխանիզմներ

ԱրՊՀ-ն մշտապես խրախուսում և ողջունում է հետադարձ կապը իր բոլոր ներքին և արտաքին շահակիցներից՝ առաջարկությունների, գոհունակության արտահայտման, բողոքների տեսքով: Ե՛վ դրական, և՛ բացասական հետադարձ կապը վերլուծվում և օգտագործվում է որակյալ կրթական ծառայություններ մատուցելու և հետագա զարգացումն ապահովելու համար: Արդյունավետ հետադարձ կապի ապահովման համար ԱրՊՀ-ն հետևողականորեն կիրառում է հետևյալ մոտեցումները՝

- համակարգում է բոլոր անհատական բողոքները,
- ճանաչում է շահակիցների իրավունքը՝ ներկայացնելու բողոքներ կամ առաջարկություններ մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ,
- խրախուսում է ցանկացած տեսակի հետադարձ կապի ներկայացումը իր ներքին և արտաքին շահակիցներից մատուցվող ծառայությունների վերաբերյալ,
- ապահովում է հետադարձ կապի բոլոր դրսևորումների նախնական մշակումը և եթե հարկավոր է, պատշաճ արձագանքումը,
- լիազորում է համապատասխան անձնակազմին կազմակերպության բոլոր մակարդակներում քննել բողոքները և դրանց լուծումներ տալ,
- բարձրագույն ղեկավարության միջոցով անձնակազմի շրջանում դրական վերաբերմունք է ձևավորում բոլոր շահակիցների և նրանց կողմից ներկայացվող հնարավոր բողոքների հանդեպ,
- հարգում է շահակիցների անանունությունը և գաղտնիությունը, եթե անհրաժեշտ է:

Նպատակները

ԱրՊՀ հետադարձ կապի մեխանիզմների մշակման և իրագործման նպատակն է՝

- ապահովել հետադարձ կապի տարբեր դրսևորումների՝ ժամանակին և անաչառ կառավարումը,
- բարելավել մատուցվող կրթական ծառայությունների որակը,
- համակարգել հետադարձ կապի միջոցով ստացվող տվյալների հավաքագրման գործընթացը, ինչը կարող է նպաստել դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավմանը,

- ճանաչել բարձրագույն կրթության ոլորտում առկա լավագույն փորձը և փնտրել ԱրՊՀ-ում դրա կիրառելիության ուղիները:

ԱրՊՀ կողմից մատուցվող ծառայությունների որակի մշտական բարելավման համար ուսանողները խրախուսվում են՝ ներկայացնելու իրենց կարծիքները, առաջարկությունները և բողոքները բուհի գործունեության բոլոր բնագավառների վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում ապահովվելով բողոքներ ներկայացնող ուսանողների անանոնությունը՝ բուհը նրանց տեղյակ է պահում, որ անանոն բողոքները անձնակազմի անդամների վերաբերյալ որոշակի սահմանափակումներով են հաշվի առնվելու՝ արդարության սկզբունքը չխախտելու նպատակով:

ԱրՊՀ հետադարձ կապի մեխանիզմները հիմնված են այն սկզբունքային մոտեցման վրա, որ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսին է այս կամ այն մեթոդի արդյունավետությունը, դրանք պետք է լինեն բազմա-տեսականացված, որպեսզի հնարավոր լինի ապահովել բոլոր շահակիցների ակտիվ մասնակցությունը: Հետադարձ կապի մեկ կամ երկու ուղիով անխուսափելիորեն հնարավոր չի լինի ընդգրկել շահակիցների բոլոր խմբերին, քանի որ նրանք հաճախ պահանջում են անհատական և յուրա-հատուկ մոտեցում:

Հետադարձ կապի մեխանիզմներից են ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումները:

Հետադարձ կապի մեխանիզմների մասին տեղեկատվություն է տրամադրվում շահակիցներին հետևյալ ուղիներով.

➤ ԱրՊՀ պաշտոնական համացանցային կայքի միջոցով (www.asu.am),


➤ զանգվածային լրատվության միջոցներով,

➤ հրապարակումների ձևով,

➤ լսարանային հանդիպումների միջոցով,

➤ սեմինար-քննարկումների, ժողովների ընթացքում և այլն:

Համալսարանի համար հետադարձ կապի գործուն մեխանիզմ կարող է լինել ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության արդյունքների հրապարակայնության ապահովումը բոլոր շահակիցների համար: Այս տեսակի աշխատանքի արդյունքները հարկավոր է ներկայացնել ոչ միայն պետական կառավարման լիազոր մարմինն՝ հավատարմագրման համար, այլ նաև մատուցել կրթական գործընթացում ներգրավված կողմերին: Սա հնարավորություն է տալիս ինչպես ապահովելու



համալսարանի գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը, այնպես էլ հետագայում ստանալու շահակիցների առավել հիմնավորված կարծիքները համալսարանի գործունեության ձեռքբերումների և բացթողումների վերաբերյալ:

1.2. Հետադարձ կապի ստացումը և օգտագործումը

Ուսանողներից կամ այլ շահակիցներից հետադարձ կապ ստանալիս և դրա հետ կապված գործողություններ կատարելիս ԱրՊՀ-ն պետք է ապահովի հետևյալ սկզբունքների կիրառումը.


- կիրառվող ընթացակարգերն արդար են, էթիկայի նորմերին համապատասխան, թափանցիկ և հանգեցնում են պատշաճ գործողությունների,

- հետադարձ կապի ապահովման ընթացքում մարդկանց նկատմամբ վերաբերմունքը հիմնված է հարգանքի, հավասար հնարավորությունների, իսկ անհրաժեշտության պարագայում՝ գաղտնիության վրա,

- հավաքվող, վերլուծվող և օգտագործվող տեղեկատվությունը ճշգրիտ է, չեզոք և անմիջապես բխում է հետադարձ կապի ապահովման նպատակներից,

- ստացված տեղեկատվությունը անհրաժեշտաբար օգտագործվում է շարունակական բարելավման համար,

- հետադարձ կապի արդյունքում իրականացվող գործողություններն իրենց հերթին արձագանքման մեխանիզմի միջոցով հաղորդվում են շահակիցներին:



ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՑՑ

Ֆոկուս-խումբը տեղեկատվության ստացման որակական հետազոտության մեթոդ է: Այն կիրառվում է շահակիցների դիրքորոշումների և կարծիքների բացահայտման, կարիքների վերհանման նպատակով: Ֆոկուս-խմբեր անցկացնելով՝ մենք փորձում ենք գտնել «ինչու՞» հարցի պատասխանները: Ֆոկուս-խումբը սովորաբար վարում են երկուսով, որոնցից մեկը մոդերատորն է, մյուսը՝ օգնականը:

Ֆոկուս-խմբի անցկացման առավելությունները

Հետազոտության այս մեթոդը առավել «տնտեսող» է. լրացուցիչ նյութական ռեսուրսների գործածման կարիք չկա, այն հնարավորություն է տալիս ինայել ժամանակը: Որպես որակական հետազոտության տեսակ՝ ֆոկուս-խումբը հնարավորություն է տալիս ուղղակիորեն դիտարկելու թիրախային լսարանը:


Ֆոկուս-խմբի անցկացման հաջողությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝

- թիրախային լսարանի վստահության ձեռքբերում, անկեղծ և անկաշկանդ մթնոլորտի ստեղծում,
- հարգալից վերաբերմունք նույնիսկ անընդունելի կարծիքների նկատմամբ,
- ֆոկուս-խմբի նպատակին համապատասխան հարցերի նախնական մշակում,
- հնչեցվող հարցերի հստակություն,
- ստուգող հարցերի առկայություն:

Ֆոկուս-խմբի վարողը պետք է կարողանա ակտիվ լսել հարցվողներին և հընթացս վերլուծել նրանց ասածները: Դա կարևոր է, քանի որ երբեմն ֆոկուս-խմբի ընթացքում կարող են նոր հարցեր առաջանալ, որոնք նախապես ներառված չեն եղել հարցաշարում, բայց քննարկման ընթացքում ծագել է դրանց կարիքը: Վարողի ճկունությունից է կախված, թե այդ պայմաններում որքանով կկարողանա ճիշտ ձևակերպել հարցը:

Ֆոկուս-խմբային քննարկման մեթոդը առավել լայնորեն կիրառվում է հետևյալ նպատակներով՝

- եթե շահակիցների հարցման ընթացքում պարզաբանման կարիք ունեցող խնդիրներ են առաջացել,



- եթե քանակական հարցումից առաջ հարցաշարի հստակեցման կարիք կա, քանի որ ֆոկլուս-խումբը նպաստում է հարցերի ճիշտ ձևակերպմանը,

- բուհի կառավարման կամ որևէ մասնավոր խնդրի համար նոր և արժեքավոր մտքերի, նոր գաղափարների հավաքագրման կարիք կա,

- եթե թիրախային խմբի կարիքների վերհանումը կնպաստի այս կամ այն ծրագրի մշակմանը:

Ֆոկլուս-խմբային հետազոտության անցկացման վերաբերյալ մի քանի կանոններ.

- ֆոկլուս-խմբային քննարկումը անհրաժեշտ է նախապես պլանավորել,

- ֆոկլուս-խմբի մասնակիցների քանակը պետք է լինի 6-12 հոգի,

- ֆոկլուս-խմբի մասնակիցների ներկայացուցչության ապահովում, ինչը կախված է ֆոկլուս-խմբի նպատակից,


- ճիշտ չէ բավարարվել մեկ ֆոկլուս-խմբով, ցանկալի է մեկ թեմայի բացահայտման համար իրականացնել մի քանի խմբային քննարկումներ՝ արդյունքների արժանահավատությունը ստուգելու համար:

Ֆոկլուս-խմբային քննարկման ուղեցույցի/հարցաշարի մշակում

Անհրաժեշտ է որոշել ֆոկլուս-խմբի նպատակը և խնդիրները՝ դրանց հիման վրա կազմելով քննարկման հարցաշարը: Այն հետազոտության կարևոր մասն է կազմում, քանի որ տեղեկատվության ստացման անհրաժեշտ գործիք է: Եթե հարցաշարը ճիշտ է կազմված, ապա ֆոկլուս-խմբի անցկացումը արդյունավետ կլինի:

Անհրաժեշտ է քննարկումը վարել հարցաշարի բոլոր թեմաների շուրջ: Հարցաշարի ծավալը չպետք է մեծ լինի, որպեսզի չհոգնեցնի և չձանձրացնի մասնակիցներին:

Հարցաշարը կազմելիս կարելի է գնալ ընդհանուր հարցերից մասնավորի կամ հակառակը: Երբեմն նույն հետազոտության շրջանակում անհրաժեշտություն է զգացվում փոփոխել հարցաշարը ըստ թիրախային խմբերի: Օրինակ, տարբեր մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսանողների համար, բակլավերի և մագիստրատուրայի ուսանողների համար կարելի է մշակել տարբեր կամ որոշ թեմաներով իրարից տարբերվող հարցաշարեր:



Ֆոկուս-խմբային քննարկման համար անհրաժեշտ է ունենալ առանձնացված վայր և ձայնագրման սարք:

Ֆոկուս-խմբային քննարկման փուլերը


1. Ֆոկուս-խմբային քննարկումը սկսում է կարճ նախաբանով: Դա անհրաժեշտ է մասնակիցներին հոգեբանորեն նախապատրաստելու, աշխատանքային կանոնները խմբին ներկայացնելու (խոսել առանձին-առանձին, բանավիճել առանց մեկը մյուսին ընդհատելու) և մասնակիցների հետ ընկերական հարաբերություններ հաստատելու համար:

2. Քննարկում, որի ընթացքում պետք է խրախուսել տարակարծությունը:

3. Ամփոփում:

4. Ֆոկուս-խմբային քննարկման արդյունքների վերլուծություն և ներկայացում:

Քննարկումներն իրականացնելուց, տվյալները ստանալուց հետո պետք է ամփոփել արդյունքները և վերլուծություն կատարել: Վերլուծության մեջ անհրաժեշտ է գրել հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության մեթոդաբանությունը, հարցաշարը և այլն: Ֆոկուս-խմբի ձայնագրությունը անհրաժեշտ է այնուհետև սղագրել և վերլուծել: Վերլուծելիս որակական տեքստերը բաժանվում են իմաստային հատվածների, տեքստերը կոդավորվում են և խմբավորվում ըստ կոդերի խմբերի: Ցանկալի է իրականացնել փորձագետների հետ քննարկում վավերականության և հուսալիության վերաբերյալ: Վերլուծության արդյունքները պետք է ընդգրկվեն հաշվետվության մեջ:



ՀԱՐՑԱՇԱՐ

Որպես որակի ապահովման մեխանիզմ՝ շատ հաճախ ծառայում է հարցումը: Հարցումը իրականացվում է նախապես կազմված հարցաշարով: Հարցումը տեղեկատվության հավաքագրման քանակական միջոց է, թեպետ հարցաշարի բաց հարցերը կարող են նաև որակական տվյալներ պարունակել:

Հարցաշարի հիմնական բաղադրիչները.

■ **Հարցաշարի նկարագիր:** Այս մասում մանրամասն ներկայացվում են հարցման նպատակը և խնդիրները: Նկարագրվում է՝ քանի մասից է բաղկացած և որոնք են յուրաքանչյուր մասի խնդիրները: Օրինակ՝ «Հարցաշարը բաղկացած է ? մասից, որտեղ կիրառված են ? և՛ փակ, և՛ ? բաց հարցեր: Հարցաշարի առաջին մասը վերաբերում է... Ստացված տվյալների վերլուծության միջոցով հնարավոր կլինի պարզել... Հարցաշարի երկրորդ մասը վերաբերում է ...Ստացված տվյալների վերլուծության միջոցով հնարավոր կլինի պարզել... և այլն»: Այս մասում նշվում է նաև հարցաշարի կիրարկման հաճախականությունը:

■ **Հիմնական մաս:** Այն բաժանված է մասերի՝ ըստ բնագավառների և ընդգրկում է հարցերը:

Հարցաշար մշակելու և հարցման արդյունքների վերլուծության քայլերը.

- Քայլ 1՝ սահմանել հարցման նպատակը:
- Քայլ 2՝ սահմանել ծավալը՝ հարցման ոլորտները:
- Քայլ 3՝ սահմանել թիրախային խումբը և ընտրանքը : Ընտրանքը վերլուծության միավորն է, գլխավոր համախմբությունը, հարցվողների ներկայացուցչականությունը, անհրաժեշտ քանակի ապահովումը:
- Քայլ 4՝ հարցերի մշակում - հարցերը պետք է լինեն հասկանալի թիրախային ընտրանքի համար: Հարցերը կարող են լինել.
 - ✓ Փակ
 - ✓ Բաց
 - ✓ Կիսաբաց:
- Քայլ 5՝ փոքր ընտրանքի շրջանում փորձարկում և գործիքի վերամշակում :
- Քայլ 6՝ հարցման իրականացում և տվյալների հավաքագրում:

- Քայլ 7՝ տվյալների վերլուծություն և հիմնական խնդիրների վերհանում:

- Քայլ 8՝ արդյունքների քննարկում թիրախային լսարանի և ուսումնական հաստատության ղեկավարության հետ:

- Քայլ 9՝ ամփոփում՝ ընդհանուր վերլուծության իրականացում:


Էմպիրիկ տվյալների ամփոփում և ներկայացում

- Վերլուծության ենթակա տվյալները պահպանվում են տվյալների բազայի տեսքով (dataset), համակարգչային ծրագրերի կիրառմամբ (SPSS, Excel և այլն): Վերլուծության ենթակա տվյալները ունեն հետևյալ տեսքը.

- Առանձին տողում յուրաքանչյուր վերլուծական միավորն է (հարցաթերթը):

- Առանձին սյունակում վերլուծական միավորի չափված յուրաքանչյուր հատկանիշն է (փոփոխական):

- Վերլուծության համար քանակական տվյալները վերածվում են աղյուսակների և գծապատկերների (Histograms, Line charts), իսկ որակականները՝ բաշխվում ըստ հաճախականության (Bar graphs, Pie charts) :



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՊԷՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

(ուսումնամեթոդական ուղեցույց)

Տնխնիկական խմբագիր՝ Լիլյա Գրիգորյան

Հանձնված է տպագրության՝ 01.10. 2019թ.:
Ստորագրված է տպագրության՝ 23.10.2019թ.:
Ծավալը՝ 5.25 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100

ԷԴԻՏ ՊՐԻՆՏ
Երևան, Բումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Toumanyanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am